

բարեցակամութեամբ:

«Այս ինչ է, մտածեցի ես. այս մարդիկն էլ մեղ պէս զգաստ և արթուն են. կաւ, եթէ ես ընկել եմ այդ յամառ ճշմարտախօս մշհմանդարի ձեռքը, էլ կասկած չկայ որ աստղս խաւարելու վրայ է, բայց դեռ տեսնեմ ինչ պատասխան է զրել նայա»

Եւ ես աշխատեցի կարդալ և հասկանալ նամակը. սակայն տեսնելով որ լաւ չեմ հասկանում, բառ առ բառ արտագրեցի օրագրիս մէջ:

Այսպէս էր գրուած:—

«Պարոն Ալէքսանդր Հոգին.

Տիար,

Պատիւ ունեմ յայտնելու ձեր նամակի ստացումը, որով դուք հարցնում էք նաի՞ թէ արդեօք եռ ճանաչում եմ իշխան Միրզա Հաջի Բարային. երկրորդ՝ թէ արդեօք ես կարծող եմ յայտնել ձեզ թէ նա ինչքան հարստութիւն ունի, և երկրորդ՝ թէ ես որպէս Պարսկաստանին լաւ ծանօթ մէկը՝ խորհուրդ կը տայի որ իմ հայրենակցի աղջիկը ամուսնանար մի պարսիկի հետ:

Ձեր առաջին և երկրորդ հարցի վերաբերմամբ՝ ես պիտի ասեմ որ, ձեր յիշած անձը իշխան չէ, այլ սպահանցի մի սափրիչի որդի է. իսկ գալով նրա հարստութեանը՝ կարծում եմ որ նա լացի իր հագի շորերից՝ ուրիշ հիմն չունի:

Ի պատասխան ձեր երրորդ հարցին, պիտի ասեմ որ ես աւելի ուրախութեամբ մի ջրաղացքաբար կը կապէի քրոջս վզին ու ծովը կը ձգէի նրան, քան կ'ամուսնացնէի մի պարսիկի հետ: Թերեւ ես սխալում եմ, բայց ըստ իմ հայեցողութեան՝ ձեր աղջկան խիստ կը դժբախտացնէք այդ մարդի հետ կապելով նրան, Բաւական է որ նա մի անգամ ընկնի անդերունը (կանանցը) նա այնտեղ կը ընկերանայ այնպիսի արարածների հետ, որոնք, ճիշտ է, թէև կնոջ կերպարանը ունեն, բայց այնպիսի վարք ու բարք ունեն, որ նրանք ձեր աղջկայ վրայից կը բառնան նրա բոլոր առաքինութիւնները:

Եւ անուրանալի է, որ նա յաճախ վկայ կը լինի մարդկային բնութեան բոլոր յոսի, խասակար կրքերին, որոնք են կոիւ, նախանձ, ատելութիւն և վրէժ. և թող աւելացնեմ և այն որ նա շատ անգամ էլ կը տեսնի զարհուրելի ոճրագործութիւններ:

Ճիշտ է, Պարսկաստանում, ինչպէս և բոլոր միւս երկու ներում բազմօրինակ բնաւորութեան և արամագրութեան տէր անձինք կան, բայց, յիրաւի, շատ քչերը կան որոնք կարող

են բաւական քաջ լինել դիմադրելու չար օրինակի զօրութեանը, և շատ քչերը կան, որոնք կարող են իրանց հեռու պահել և չթողնել որ իրանց բարի տրամադրութիւնը ապականուի մահմեղական կրօնի վնասակար սկզբունքներից՝ ինչպէս և դեսպոտ կառավարութեան անիրաւ պահանջներից...

Հաջին ինքը բնաւորութեամբ լաւ է, և եթէ նա քրիստոնէական կրթութիւն ստացած լինէր՝ այժմ շատ բարի մանձն կը լինէր. բայց նա ունի այն մոլութիւնները որ յատուկ են այն երկրին՝ ուր մարդիկ ապրում են խարէութեամբ, և այսպէս ասած՝ ձեռքը հազիր բերանին հասցնելով:

Եւ հէսց այդ է պատճառը, որ նրանք՝ հակառակ իրանց կամքին՝ ստախօսներ և աւազակներ են դառնում, և մի մարդ իրաւացի է համարում ուրիշին երթարկել այն հարստահարութեանը, զրկանքին և մի խօսքով այն անարդարութիւնը, որպիսին ինքն է կրել:

Արդ, ես յոյս ունեմ որ, այս իմ անկեղծ կարծիքը իմանալուց յետոյ, գուք այլիս չէք մտածիլ որ օրիորդ Հոգին, կը երջանկացնէք՝ նրան իշխանունի Հաջի Բաբա դարձնելով:

### Մնամ Ձերդ և այլն»

Արտագրելով այս նամակը, ես կանչեցի իմ բարեկամ նաղիրին, և խնդրեցի նրան թարգմանել և հասկացնել ինձ, նա թարգմանեց և երբ ես լաւ հասկացայ, տրամդրութիւնս այնպէս փշացաւ, սիրտս այնպէս վայր ի վերոյ եղաւ, որ եթէ այդ բոպէին նամակ զրողը մօտս լինէր՝ ամենասոսկալի կատաղութեամբ կը յարձակուէի նրա վրայ:

Ճիշտ է, ևս իմ մէջ ընդունում էի որ նա սխալ չէր գրել, բայց ախր նա ինչն պիտի բախտից զրկէր ինձ, նա՞ որ ինձ հետ նոյն սենեակումը ընել էր և նոյն ամանից կերակրուել էր:

Ես խայտառակուել էի Հոգերի մօտ. ես իսկոյն վճռեցի այնպիսի մի նամակ գրել նրանց, որով մէհմանդարի հոգին հանէի և նրան այն տեղը ձգէի՝ որ շանից էլ պակաս արարած համարուէր: Մի քիչ մտածելուց յետոյ, գրեցի հետեալը:—

«Իմ սիրելի բարեկամ,

Պատուիս վրայ խօսք՝ որ մէհմանդար մին շատ վաս մարդ. նա լինչի ուզի օրիորդ Բէսիին ծովը գլորի. լինչն, պարոն. լինչի համար նա ստեր գրի, պարոն, նա ասի ես սափրիչի տղայ. այն ես մի ժամանակ սափրիչի տղայ, բայց հիմա ես միրզա. ախր լինչի նա ստեր ասի, նա ասի ես՝ աղքատ մարդ. նա ասի ես հին շորեր հագնի. լինչի ասի այդ, իմ Շա-

մաշալլահ շատ հարուստ մարդ, և եթէ Շաշը շատ հարուստ,  
նրա բոլոր ծառայ հարուստ. էլ ի՞նչ ուզի նա, պարձն. ես շատ  
բարկացած, պարձն: Յետոյ մեհմանդար ուրիշ մենք ստեր էլ  
ասի, պարձն. նա ասի պարսիկ կնիկներ վատ կնիկներ. որտեղ  
նա տեսել պարսիկ, կնիկներ, պարձն. նա մէկ կնիկ էլ չի տես.  
ուրիմ նա ի՞նչպէս ասի թէ ես մին կնիկ լաւ էն մին կնիկ  
վատ. բոլոր երկրում պարձն, մի քանիս լաւ, մի քանիս վատ:  
Նա ասի բոլոր պարսիկ վատ, բոլոր կնիկներ վատ. քիչ սուստ  
պարձն. լաւ չի: Մէր բո կնիկիդ, աղջիկներիդ, բոլոր բարեկամ-  
ներին էլ:

### Հաջի Բարա»

Այս նամակը պ. Հոգին ուղարկելով՝ մի քիչ հանգստա-  
ցայ, բայց վճռեցի գեսպանին յայտնել որ, եթէ մենք վատ ա-  
նոն էինք թողնում Անգլիայում՝ այդ մեր յանցանքն չէր, այլ  
անիծուած անհաւատ մէհմանդարինը:

Պարզ երեւում էր որ նա՝ դեսպանը սկսել էր սաստիկ  
անհանգստանալ, որովհետեւ ֆրանկների հետ կատարուելիք մեր  
գործը շատ դանդաղ էր առաջ գնում. նրա համբերութիւնը  
հատել էր որովհետեւ նա տեսնում էր որ բաւական երկար ժա-  
մանակ էր անցել և իր գեսպանութեան բուն նպատակը դեռ  
չէր իրագործել: Մէհմանդարն էլ ամեն օր գալիս գնում էր,  
ու մի նոր պատմութիւն էր անում նրա համար, և գործի ու-  
շանալու համար մի նոր պատճառաբանութիւն էր անում, թէև  
պարզ յայտնում էր որ նրա տուած պատճառները մէկը միւ-  
սից աւելի կեղծ՝ սուտ ու սիալ էին: Եւ լաւ էր որ այդպէս  
էր, որովհետեւ այդ բանով ինձ համար հեշտ կը լինէր ապացու-  
ցանել որ նա վատ, շատ ստոր մարդ էր:

«Ի՞նչու ուրիմ, մտածեցի ես, վրէժ չառնեմ և չխայտառա-  
կեմ այդ անհաւատին»:

### ԴԼ. Խնե

Անգլիայի գահաժառանդը այցելում է դեսպանին: — Զարմանալի բաներ են  
պատահում:

Ես վճռեցի դեսպանի հետ համարձակ խօսել մէհմանդարի  
մասին, բայց երբ գնացի նրա մօտ, հակառակի պէս երկուսն  
էլ նստած՝ զբաղուած էին շատ լուրջ խօսակցութեամբ:

«Դեռ ժամանակը չէ ուրիմք մտածեցի ես. որովհետեւ Անգ-  
լիայում՝ ինչպէս Պարսկաստանում ամեն բանի համար որոշ  
ժամանակ և եղանակ կայ:

Դեսպանը որոշել էր մի մեծ խնճոյք տալ և հիւրնկալել

Անգլիայի գահաժառանգին՝ ինչպէս և բոլոր ազնուականներին և  
քահանայապետին։ Հետևապէս նա շատ մտազրադ էր որովհե-  
տեւ իր մտածած ինճոյքը սարքելու համար՝ շատ բանակցու-  
թիւն պիտի անէր և գլխաւոր դժուարութիւններից մէկը՝ մի-  
յարմար օր նշանակելն էր։

Այս բանը՝ այսինքն անպատճառ մի յարմար օր նշանա-  
կելը՝ մեզ շատ խորթ, շատ տարօրինակ բան թուաց. որովհե-  
տեւ մեզ արգէն հաւաստիացրել էր որ անգլիացիների համար՝  
բոլոր օրերը մի և նոյնն են. որ ոչ մի օր մի ուրիշ օրից աւե-  
լի բարեբաստ չէր համարւում։ Այս, այդպէս էր նա հասկաց-  
րել մեզ, բայց ամեն օր, և ամեն ժամ նրա ստերը մէկը միւ-  
սի ետևից բռնւում էին։

Վերջապէս որոշուեց ինճոյքի օրը և տպարաններին պա-  
տուիրուեց յայտարարել այդ օրը։

Պարսից դեսպանի տալիք ինճոյքի լուրը տարածուելով  
ամբողջ քաղաքում այնքան տպաւորութիւն գործեց, որքան  
գործում է ֆաթ Ալի Շահի Շնօ բուզի տօն կատարելը։ Զար-  
մանալի. կասես թէ անգլիացիները դրանից առաջ պարսիկներ  
չէին տեսել։ Առաւոտից մինչև զիշեր, դեսպանի տան դուռն  
էին խուժում բազմաթիւ անձինք՝ որոնք ցանկութիւն էին յայ-  
տնում, որ իրանք էլ հրաւիրուէին։ Մէկը մի կերպ պահանջում  
էր որ ինքն էլ պիտի հրաւիրուէր, որովհետեւ իր եղրօր որդին  
մի ժամանակ եղել էր Պարսկաստանում և տեսել էր Շահին, միւ-  
ուրիշն էլ միենոյն ցանկութիւնը կամ աւելի լաւ ասած՝ պա-  
հանջ էր անում, որովհետեւ ինքն այն մարդու եղրօր բարեկամն  
էր, որը Պլմըթում խօսել էր դեսպանի հետ։ Մի տիկին էլ  
շատ բարկացել էր որ իրան չէին հրաւիրել, պնդելով թէ  
որովհետեւ պարսիկները մէկից աւելի կին են պահում իրանց  
հարկմում, հետեւապէս պարսից Շահի Ներկայացուցիչն էլ պար-  
տաւոր էր նոյն սկզբունքով կազմել իր հիւրերի խումբը։

Հոգերից ոչինչ լուր չունէի. կասկած չկար որ անիծած  
մէհմանդարի գրած նամակը ունեցել էր իր վատ հետևանքը-  
ժամանակ առ ժամանակ՝ դեսպանը կատակով յիշում էր նրանց  
անունը, և ինձ էլ ծաղրելու համար հարցնում էր թէ «ապա-  
սուիներն երբ են ընկնելու մեր ձեռքը»։ Բայց որքան զարմա-  
ցայ, երբ ինճոյքից մի քանի օր առաջ մի բանի անձերի հետ  
լցուած մի կառքում տեսայ տիկին Հոգին, որ ինձ տեսնելով՝  
հեռուից սկսեց գլխով նշաններ անել ինձ, որքան հասկացայ-  
նա կանչում էր ինձ։

«Ալիի մօրուքը վկայ, այս Փրանկները գիտ են», մտա-  
ծեցի ես, և յետոյ ոգերուելով այն յուսով որ գուցէ ամուս-

Նութեանս մասին մի բան աջողուելու էր ինձ համար՝ բարուոք համարեցի կատարել պառաւ տիկնոջ հրաւէրը։ Քայլեցի կառքի մօտ, և որքան զարմացայ երբ նա սկսեց խօսել հետո այնպէս սիրով և քաղցրութեամբ՝ որպէս թէ ոչինչ չէր անցել իմ և իրանց մէջ։

— Օհօ, իշխան, ինչպէս էք, հարցրեց նա. երկար ժամանակ է որ ձեզ չենք տեսել. դուք մոռացել էք ձեր բարեկամներին. դուք երկի այլ ևս մեզ բարեկամ չէք ճանաչում. ես գիտեմ թէ ինչու։

Եւ նա շարունակեց բաւական երկար ժամանակ խօսել, և ես ամբողջ ժամանակը այնքան աշխատում էի նրա խօսքերի իսկ միաբը հասկանալ, որ գլուխու սկսեց պայոյտ գալ. Վերջապէս ճիշտ այն րոպէին որ նա պատուիրեց կառապանին ճանապարհը շարունակել՝ ես նոր գլխի ընկայ թէ նրա իսկ մաթլարը (խոդիրը, միաբը) ինչ էր, և ես իսկոյն յիշեցի մեր պարսկական նամակները, որոնց բովանդակութեան գլխաւոր մասը բաղկացած է լինում մեծարանաց խօսքերից՝ այն ինչ բուն մաթլարը գրուած է լինում լուսանցքում։ Այն, ես լաւ հասկացայ, նա իր բոլոր խօսքերով ուղղում էր ինձ հասկացնել որ ինքն էլ հրաւիրուէր դեսպանի իննոյքին, և որպէս զի ես աշխատէի կատարել իր այդ մեծ ցանկութիւնը՝ նա թոյլ տուեց որ թէսին—իմ լուսներես թէսին—իր մատի ծայրով ձեռք թօթուէր հետո։

Ես այնքան էլ շուտ խարուող չէի որ համաձայնէի նրա իդը կատարելու, բայց մինոյն ժամանակ, յուսալով որ գուցէ դեռ ինձ կը յաջողուէր քուրուր թումաններին տիրանալ՝ սկսեցի գործ ածել մեր պարսկական գեղեցիկ և հաճոյացուցիչ ոճերից մի քանիսը՝ հաւաստիացնելով նրան որ իր կօշկի տակին փոշին ինձ համար աչքի դեղ էր. և խնդրեցի որ նա երբէք չպակասեցնէր իր ստուերը (շնորհը) իմ վրայից։

Խօսքերս ըստ երևոյթին շատ հաճոյացըին նրան, և նա շնորհակալութիւն յայտնեց. Կառքը ճանապարհ ընկաւ. բայց դրանից յետոյ՝ ես Հոգերից ստացայ տոմս՝ տոմսի ետևից, որով նրանք թախանձում էին որ ես կատարէի իրանց ցանկութիւնը։

Զկամենալով լսել դեսպանի կատարեները, ես չդիմեցի նրան. բայց մի ուրիշ միտք ծագեց գլխումս։ Ես տեսել էի թէ հրաւիրատումսերն ինչպէս էին գրուել. ուստի վերցնելով տոմսերից մէկը (անշուշտ շատ ծածուկ) բաց արի բառարանս և նրա օգնութեամբ գրա վրայ գրելով «Մէկ մայր Հոգ և երկու գլուխ աղջիկներ», ինքս անձամբ տարայ նրանց տան դուռը։

Ես բոլորովին զարմացայ տեսնելով թէ անզլիացիք ինչ-  
ք ան թեթև պատրաստութիւններով են ընդունում իրանց ար-  
քայորդուն Եթէ մեզ թոյլ տրուէր որ մեր սովորութեան հա-  
մեմատ պատրաստութիւններ տեսնենք, մենք անհաւատներին  
կը սովորեցնենք թէ ինչպէս պիտի պատուել, մեծարել մի ար-  
քայական ընտանիքի անդամին, Թանկագին կտորներից փաէն-  
դազ կը փոէինք փողոցի դռնից մինչև այն սենեակը ուր ար-  
քայորդին պիտի մանէր, և բացի դրանից՝ սենեակի դուն-  
նրան հարիւր ոսկի փէշքաշ կ'անէինք: Բայց այստեղ կար մեծ  
տարբերութիւն, բացի մի փիշուազից<sup>1)</sup> որը պիտի նրան ըն-  
դունէր տան դուն և բացի տունը մի քանի մոմերով լուսա-  
ւորելուց՝ ուրիշ հչինչ պատրաստութիւն չկար: Պարսկաս-  
տանում, շարաթներով պատրաստութիւններ կը տեսնէին մի  
թագաժառանգի շքսխմբին ինչպէս և նրա ծառաներին կերակ-  
րելու համար: Բայց այստեղ ոչինչ ձայն ձուն չկար, ամեն  
բան մասց իր տեղում մինչև հիւրասիրութեան իսկ օրը:

Միրզա Ֆիրուզը խորհրդակցեց ինձ և իր ծառաների  
հետ՝ իմանալու համար թէ ինչպէս անէինք որ ամենամեծ պա-  
տիւը տուած լինէինք Անգլիայի գահաժառանգին: Թաղի-  
ֆէրաշը խորհուրդ տուեց արքայորդու առաջ մենք չոգենք և  
գետինը համբուրենք: Բայց Մոհամէդ բէզը առարկեց ասելով  
որ աչ մի մուսուլման չպէտք է իրան այնքան ստորնացնի որ  
խոնարհուի մի անհաւատի առաջ եթէ նրան խիստ կերպով  
չստիպեն: Սէիդն ու Մահմուդը խորհուրդ տուին որ լաւ կը  
լինէր չէրքեզուհին թմրուկ զարկելով երգէր՝ ինչպէս որ նա  
կանէր մեր Շահի կամ նրա որդու առաջ: Դեսպանը առարկեց,  
որովհետեւ նա վախենում էր որ իր կինը լսէր և յետոյ, Ալլահը  
գիտէ, թէ հետևանքն ինչ կը լինէր:

Մենք առաջարկեցինք՝ արքայորդուն պատուել մեր ազ-  
գային մի քանի քաջագործութիւններով: Խոհարար Հասանը  
ասաց թէ ինքը փառաւոր կերպով կրակ կ'ուտէր և բերանից  
շատրուանի պէս ջուր դուրս կը ցայտէր: Մոհամէդ բէզն էլ  
յանձն առաւ Շահ Նամէից տան հազար տուն ոտանաւոր ար-  
տասանել: Թաղին էլ ասաց որ ինքը մի քանի լութեական  
քաջագործութիւններ կ'անէր, և կարող էր նաև մի պղնձէ պնակ  
փոռացնել մի փայտի ծայրի վրայ՝ միւս ծայրը քթի վրայ  
պահելով: Եթէ ըմբշամարտութիւն էլ հարկաւոր լինէր, ախո-  
ռապետը և սափրիչը պատրաստ էին առաջ գալու, և եթէ գի-  
շերը ժամանակ անցկացնելու համար մի երկար պատմութիւն

1) Պատգամաւորներ որոնք դիմաւորում են մէկի: Տ.

հարկաւոր լինէր՝ ես ինքս պատրաստ էի կրկնել Անթարից  
ինչ կտոր որ ցանկացուէր:

Բայց մէհմանդարը առարկեց բոլորիս ասելով թէ քանի  
որ թագաժառանզը պարակերէն չզիտէ՛ Շահ Նամէից արտա-  
սանութիւնը կամ Անթարից երկար պատմութիւնը անօգուտ  
և ապարդիւն կ'անցնէին. նաև նաև ասաց որ միշ մտածած միւս  
քաջագործութիւնների փոխարէն՝ աւելի լաւ կը լինէր որ մի՛ք  
հրաւիրենք մի խումբ անգլիացի երգիչ—երգչուհիներ, որոնք  
կ'երգէին և կը նուագէին այնպէս՝ որ շատ դուր կը գար արքա-  
յորդուն:

Վերջապէս հասաւ հիւրասիրութեան ժամը:

—Մէհմանդարը մեր Շահի պատկերը զարդարել էր մի շատ  
փառաւոր շրջանակով: Ամբողջ տունը բոցավառում էր անթիւ  
ճրագներով և, մի շատ գեղեցիկ աթոռ էլ պատրաստուած էր  
մեծ հիւրի համար: Հիւրերն սկսեցին գալ և մենք սկսեցինք  
անձութեամբ սպասել շահզարդէին:

Ես ու Մոհամէդ բէգը որ մի-երկու անգամ եղել էինք  
անգլիական հանդէսներում, շատ չզարմացանք երբ հիւրերի  
թւում տեսանք գեղեցիկ շահել կանայք (ինչպէս և շատ պա-  
ռաւաներ) իրանց թանկագին շորերով և տչքի շլացնող զարդե-  
րով. բայց միւս ընկերները՝ ծ նրանք ապշեցին, որովհե-  
տեւ առաջին անդամն էր որ նրանք այդպիսի գեղեցիկ կանայք  
ու թանկագին զարդեր՝ էին տեսնում:

—Օ՛, ասաց ախոռապետը, եթէ այս լուսներես աղջկնե-  
րից մի-վեց հատը թալանի ժամանակ ձեռքս ընկնէին և ես  
նրանց տանէի թէհրանի բազարը վաճառելու, այնքան ոսկի  
կը շահէի որ կը կարողանայի խան դառնալ ու ամբողջ կեան-  
քումս խան մնալ:

—Նայիր այն պառաւ կնոջը որ իր շորերով սիրամարդի  
պէս սիրունացել է, ասաց Թաղին տեսնելով մի կին, որի  
կուրծքն ու բազուկները մերկ էին և ամբողջ մարմինը տնքում  
էր տարիքի, ոսկու և աղամանդների ծանրութեան տակ: Օխ՛,  
եթէ դրան հէնց այդպէս կանգնած տեղն ինձ տային, ասաց  
նա, ես խօդա հաֆէզս կ'ասէի և վաղը կը գնայի այստեղից:

Վերջապէս ականջիս դիպաւ մի ծանօթ ձայն՝ որ ասում  
էր՝ «Եկ գնանք ჩէսի, արի Զէսի», և յետ նայելով՝ տեսայ ե-  
րեք կանայք, որոնք մեր շէյխ օլ էսլամների չալմաներին քիչ  
նման չալմաներ գլխներին ծածկած՝ երերալով յառաջ էին  
գալիս: Տիկին Հողը և իր աղջիկներն էին նրանք: Հէնց որ  
տիկինն ինձ տեսաւ՝ ճչաց՝ «Վերջապէս մենք եկել ենք, իշխան,

տեսէք մինք չալմաներ ենք ծածկել ի պատիւ նորին մեծութիւն Շահիւ»

Եւ նրանք բարձրացան դահլիճը, Ես չկամեցայ հետևել նրանց՝ մինչկ մի քիչ ժամանակ անցնէր. որովհետեւ վախենուած էի որ նրանց մասին ինձնանից բացատրութիւն պահանջուէր: Վերջը երբ համարձակուեցի բարձրանալ վերև, սոսկալով տեսայ որ տիկին Հոգը իմ ուղարկած հրաւիրատոմսը ցոյց էր տալիս մէհմանդարին և անշուշտ խնդրուած էր որ նա իրանց ներկայացնէր ղեսպանին:

Ի՞նչպէս երեւում էր, տիկինն ու իր աղջիկները գրաւել էին բոլոր հիւրերի ուշադրութիւնը: Վախից ու տարակուսանքից սիրտս սաստիկ բարախում էր. Ես սարսափում էի ղեսպանի և մէհմանդարի յանդիմանութիւնից և ծաղրից.

Յանկարծ մի քանի ձայներ միասին յայտարարեցին թագաժառանգի գալուստը: Դիսպանն ու մէհմանդարը շատ մեծ յարգանքով առաջ գնացին նրան ընդունելու և երբ նա մտաւ դահլիճը, բոլոր անզլիացիները մի կիսաշրջան կազմեցին և խոնարհաբար գլուխ տուին նրան:

Ի՞նձ համար նոր այդ բոպէին պարզուեց այն խօսքերի ճշմարտութիւնը որ ես յաճախ լսել էի այս շահզադէի մասին: Նրա ամեն մի խօսքը դիւթում էր մարդուս. Նրա ծիծաղը թալիսմանի ազդեցութիւն ունէր, և նրա նայուածքն անտարակոյս երջանկարար և բախտաւորացուցիչ պիտի լինէր:

Ես հասացեցի յիշելով թէ ինչքան տարբեր ազդեցութիւն է գործում մեր շահզադէների, մեր մեծամեծների ներկայութիւնը, որոնք ամբողջ աշխարհը հեռու են քշում իրանցից, որոնց դէմքերը ահ ու սարսափի են աղդում, որոնց ժամանակ նշան է որ շուտով կեղեքելու, հարստահարելու է սրան-նրան, և որոնց երեսի մոռյլուելուն իսկոյն հետևում է սոսկալի պատիի:

Արքայորդին սկսեց ծանր քայլել շրջանում և շատ քաղաքավարի կերպով խօսել բոլոր ազնուականների հետ: Տիգին Հոգը և իր աղջիկները սրան-նրան հրելով՝ ճեղքելով՝ կանգնել էին մի աչքի ընկնող տեղ: Երբ արքայորդին հասաւ նրանց և տեսաւ նրանց ահադին չալմաները, ժպտաց և դառնալով ղեսպանին հետաքրքրուեց թէ նվեր էին նրանք: Դիսպանը չյիշելով որ նրանց մէկ անգամ տեսել էր, դիմեց մեհմանդարին, որը կարծես թէ շփոթուեց և չէր հասկանուած ինչ ասել: Բայց տիկինը կրկին հանեց իր անիծած հրաւիրատոմսը և ցոյց տուեց: Արքայորդու ցանկութեամբ մեհմանդարը բարձ-

բաժան կարդաց նրա վրայ գրուածը—«Մէկ մայր ջոգ և երկու գլուխ աղջիկներ»:

Այս այնպիսի ծիծաղ յարուցեց որ ոչ մի բանով չէր կարելի զսպել, թէպէտ թագաֆառունզի երեսից երևաց որ նա իր ազնւութեամք չէր քաջալերում այդ ծիծաղը, բայց տիկին Հոգը և աղջիկները իրանց խայտառակուած զգալով՝ իսկոյն յետ քաշուեցին և աշխատեցին չերևալ խմբի առաջ: Ես էլ յետ քաշուեցի:

Ես կուլ տուի իմ թշուառութիւնը ամենալաւ ձեռվը որ կարող էի, և ինձ հեռու պահեցի որպէսզի ոչ ոք չնկատէր ինձ: Բայց և այնպէս ես ցանկանում էի մէկ անգամ էլ բախտս փորձել՝ ինձ կախարդող Բէսիի նկատմամբ: Ես որոնեցի նրան և նրա մօրն ու քրոջը, և վերջը նրանց գտայ այն սենեակում, ուր պատրաստուած էր կերուխումի սեղանը: Կարծես թէ նրանք ոչ մի կերպով տրամադիր չէին իրանց ստուերը վրաս ձգելու: Մայր Հոգը իր սրտի դարդին դարման էր անում՝ ուտելով ինչ որ ձեռքն էր ընկնում: իսկ աղջիկները իրանց այնքան անարգուած էին զգում որ աւելի ուրախ կը լինէին որ իրանց չալմաներով խոր թողուէին գետնի տակ: Ես նրանց արժանացրել էի Անգլիայի թագաֆառանզի ուշալրութեանը, բայց նրանք ոչ մի կերպով շնորհակալ չեղան ինձանից: պարզ էր որ ես սխալուել էի երբ մտածել էի որ նրանց համար այդ բանը աջողացնելով՝ Բէսիի և նրա փողի տէրը կը դառնայի:

Ես գնացի ընկերներիս մօտ, որոնք տաք-տաք վիճաբանում էին իրանց տեսածների վրայ: Մենք բոլորս էլ համաձայնեցինք որ մեր երկրի իննոյքները շատ աւելի փառաւոր են քան այստեղինը, որովհետև մեր երկրում իննոյքի համար շատ ընդարձակ տեղ և մաքուր օդ ունինք: բայց այստեղ հիւրերը փակուած սենեակում չէին կարողանում շունչ քաշել, այնքան մաքուր օդի բացակայութիւն կար:

Անգլիայում՝ տղամարդկանց և կանանց իրար հետ միասին մէկ սենեակում խառն ապրելը, խառն ուտելն ու զուարձանալը ինձ խորթ չէր թւում: որսվիետե ես արդէն մի քանի անգամ տեսել էի նրանց հաւաքումները, բայց մեր այն ընկերները որոնք ոչ մի Փրանկի հիւրասիրութիւն չէին տեսել, զարմացել էին, բերանները բաց էր մնացել երբ տեսել էին որ դեսպանի երկսեռ հիւրերը նոյն սենեակում միասին ուտում-խմում էին: Տղամարդկանց և կանանց այդպէս միատեղ հաւաքուելն ու միասին զուարձանալը՝ մեր ընկերների աշքում մի այլ բանի նշան էր երեսում... Սակայն միենոյն ժա-

մանակ նրանց խիստ՝ կարգապահութիւնը և հանդարառութիւնը աւելի և զարմացնում էր նրանց:

— Ալլահնը, Ալլահն, բացականչեց ախոռապետը, եթէ այդ հիւրասենեակում ֆրանկների տեղ պարսիկներ լինէին, առև ի՞նչ աղմուկներ կը հանէին. շատ ժամանակ չէր անցնիլ և նրանք դանակներ կը քաշէին իրար վրայ և մինչև այս րոպէն արդէն իրար վիրաւորած, իրար մօրութներ դուրս տուած կը լինէին:

Յանկարծ մի անսովոր շարժում ընկաւ մեր տան մէջ և խկոյն յայտնուեց որ թագաժառանզը գնում էր: Շուտով բոլոր միւս հիւրերն էլ իրանց սպասաւորների հետ գնացին: Մենք կարծում էինք որ այդպիսի մի մեծ խսրի գնալու ժամանակ՝ ահազին աղմուկ կը լինէր, վէճ ու կոր կը լինէր. բայց ընդհակառակը տեսանք որ նրանք բոլորն էլ հեռացան անձայն և գնացին իրանց տները:

Ճիշտ է, այստեղ չկար վէճի և կոռի այն աղբիւրը որ մենք ունենք Պարսկաստանում, զայլանչիներ և կօշիկ տանողներ չկային. հետեապէս ծառաների մէջ նախապատռութեան կամ յառաջընթացութեան մրցում, վէճ ու կոր տեղի չունեցաւ. բայց միւս կողմից, փողոցում կառապանների և վագոնչիների մէջ տեղի ունեցաւ այնպիսի մի կորիւ որի նամանը մեր քաղաքներում լինում է միայն հայդէրիների և նէէմաթ ալլահների մէջ:<sup>1)</sup>

— Ա՛, ասաց Մոհամէդ բէկը՝ տեսնելով թէ կառապաններն ու գագոնչիները ինչ անողորմաբար մորակում էին իրանց ձիերին. ա, այն բարբարոսութիւնը որ Պարսկաստանում կատարում է դժբախտ ու յայեաթների<sup>2)</sup> վրայ, այստեղ կատարում է ձիերի վրայ:

Եւ այս նկատողութիւնից յետոյ, մենք գնացինք քնելու:

1) Մըրանք երկու աղանդաւորներ են Պարսկաստանում: Դրանց աղանդների ժագումը զեռ ճիշտ ստուգուած չէ: Պարսկական քաղաքների ումիկ զասակարգի մեծ մասը կամ հայդէրի է կամ նէէմաթի, թէպէս նրանց վէճի խսկական պատճող յայտնի չէ: Նըրանք կուում են քարերով, փայտերով, և շատ անգամ էլ իրար սպանում են: Ամենաընդունուած բացատրութիւնը Շարդինի առաւածն է: Նա ասում է որ Սպահանը, ուր մկրում ծագեց այդ երկու աղանդը, ընկած է Հայդէր և նէէմաթ Ալլահի անունով երկու հակառակորդ գիւղերի գիրքում և ժամանակի ընթացքում այդ գիւղերը ընկան քաղաքի տարածութեան մէջ:

2) Հպատակ, երկրագործ, զիւղացի, ծ. թ.

ԴԼ. Խզ.

Պարսիկները խօսում են նախթաց երեկոեան արկածներին ինչպէս և իրանց տեսած ու լսած անձերին և բաներին մասին:

Հետևեալ առաւօտը, Միրզա Ֆիրուզը լողանալուց, մօրուքը ներկելուց և յարդարելուց յետոյ, մեզ իր մօտ կանչեց և շատ ուրախ տրամադրութեամբ՝ երկար խօսեց մեզ հետ նախընթաց գիշերուան բոլոր բաների մասին:

—Այժմ, ասաց նա, դուք գիտէք թէ Փրանկներն ինչպիսի մարդիկ են: Դուք ձեր աչքով տեսաք. եթէ տեսած չլինէիք, չէիք կարող ճանաչել նրանց: Ինքս նրանց հետ յաճախ վեր ու նիստ ունենալով, այժմ սկսել եմ ընտելանալ նրանց վարք ու բարբի հետ: Դուք տեսամք նրանց գահաժառանգին. օ, նա այս երկրի Արքաս Միրզան է: Երդում եմ Մարզարէի և Ալլահի անունով որ ես երբէք չէի երևակայում թէ մի մարդ կարող է այնքան ոյժ և ազգեցութիւն ունենալ մի ուրիշի վրայ՝ ինչպան նա ունեցաւ ինձ վրայ: Արքաս Միրզան ինձ իր գերին էր դարձեւ, բայց այստեղ այս մարդը կարծես ձեռքս ու ոտքս պինդ կապեց: Օ՛ ինչ վարք, ինչ ազգու կերպարանք ունէր նա, նրա աչքը կատարեալ լուսին էր<sup>1)</sup>! Նա շատ քաղցրութեամբ էր վարւում, և այնուամենայնիւ իր դիրքը պահում էր ամենայն վսեմութեամբ՝ որպէս իսկական իշխան: Ես վստահ եմ որ եթէ Ֆաթ Ալի Շահը նրան հանդիպէր ու տեսնէր թէ նա ինչպէս մարդ է, նա ոչ միայն կը համաձայնէր կատարել այն բոլոր իրաւացի առաջարկութիւնները որ Անգլիան անում է մեզ, այլ և իր գահը նրա տրամադրութեան տակ կըդնէր:

—Բալի, բալի, ճշմարիս էր հրամայում, ասաց Մոհամէդ բէզը, նա զարմանալի Ֆրանկ էր: Անգլիացիների մէջ նա այն է ինչ որ Տիեզերքի Ապաւէնի մօրուքն է իր հպատակների մօրուքների մէջ.—աննման:

—Բայց դուք չլսեցիք նրա խօսքերը, շարունակեց դեսպանը, նա այնպիսի բաներ ասաց՝ որ ես ծիծաղից թուլացայ. նա այնպիսի սրախօսութիւննէր ունի՝ որ համեմատ են զալիս մեր մի քանի կատակներին: Եթէ Շահը ինձ ընտրած չլինէր որպէս իր ներկայացուցիչը, բոլոր միւս պարսիկներն էշեր կը համարուէին այստեղ: Ենթադրենք որ կամ այդ թիւքը Ասքէր խանը լինէր իմ տեղ, կամ այն կով Ֆարրաջ օլլահ խանը, կամ այն գիժ Միրզա Արուշ Ղամիմը. նրանք ում շուն են որ կարո-

1) Նշանակում է սուր, թափանցող աչք ունէր:

դանային այս իշխանի հետ խօսել այնպէս՝ ինչպէս ես խօսեցի:

— Բաղի, բաղի, մաշալլահ, բացականչեցի ես՝ որ ամբողջ ժամանակ վախենում էի հայեցանքներ լսել Հոգերի հրաւիրելու համար.— բաղի, մաշալլահ, ևվ է կարող ձեզ չափ հասկացողութիւն ունենալ. փառք Ալլահին. եթէ դուք չինչինք, եթէ ձեր իմաստութիւնը չինչը՝ այս օտար երկրում Շահը սներես կը լինէր, մենք կը խայտառակուէինք և շան լակոտներից էլ պակաս անսառուններ կը համարուէինք:

Շողոքորթութիւնս նրան աւելի ոգևորեց, և նա ասաց. — Ե, տեսնէիք թէ մի քանի ինչպիսի կատակներ արի նրա հետ: Ես փորխոց արի իշխանին իմ այն խօսքերով որ ասացի մի պառաւ բէզումի, որը մօտս եկաւ և մի քանի հաճոյացուցիչ ու մեծարանաց խօսքեր ասաց ինձ: Այդ բէզումը, իր կզակին և վերի շրթունքին այնքան մազ ունէր, որքան հս ունեմ իմիս վրայ, և նա անկասկած մոռացել էր մաստիք<sup>1)</sup> ծամել: Ես ասացի. «Տիկին, հարկաւոր չէ՝ որ դուք ինձ աւելորդ պատիւ ընծայէք, որովհետև դուք արդէն ինձ այնքան պատուել էք որ թողել էք բիբեր ու մօրուք բուտնին ձեր երեսի վրայ»:

— Բարիքալլահ, մաշալլահ, ասացինք մենք միաձայն:

— Մի ուրիշ անգամ էլ, շարունակեց նա, երբ ինձ ծանօթացնում էին մի դժբախտացած Շահի հետ, որը ապստամբուել էր Անգլիական արքունիքում և որն այնքան պարարտ էր որ միշտ պարտաւորում էր նոտել՝ ես ներկայ եղողներին ասացի. «Մաշալլահ, մաշալլահ, ինչքան կ'երջանկանան աղքատները՝ եթէ սա կրկին տիրանայ իր գահին»: Թէպէտ ոչ ոք չհասկացաւ իմ այդ գիտողութեան նրբութիւնը, այնուամենայնիւ բոլորն էլ ասացին «բաղի, բաղի» և շահն ինքն էլ, ըստ երևոյթին՝ անչափ ուրախացաւ:

— Շատ գեղեցիկ, շատ, գեղեցիկ, ասացինք մենք, դուք, ովք դեսպան, շատ հիանալի կերպով էք խօսել. մենք հասկանում ենք ձեր կատակը. հրաշման, սքանչելի սրախօսութիւն, մաշալլահ, մաշալլահ<sup>2)</sup>:

— Կրկին, ասաց գեսպանը, մի պառաւ խան ողջունեց ինձ և շատ բաներ հարցրեց: Նա հետաքրքրուեց իմանալ թէ ես հաւանում էի Անգլիան, և թէ ինչ գաղափար էի կաղ-

1) Մի տեսակ խէժ, որ անուշացնում է շունչը:

2) Այս ակնարկում է այն սովորութիւնը, որ կոչում է «Թէյլ միգան»: Գոհաբանութեան մամնաւոր գէպերում, արևելցի իշխանները կը ռում են իրանց՝ կշռաթաթի մէկի մէջ իրանք նստելով և միւսի մէջ ոսկի լցնելով. կշռելուց յետոյ այդ ոսկին բաժանում են աղքատներին:

մել իրանց կանանց, ձիերի և այս ինչ այն ինչ բաների մասին՝ Նրանից ձանձրանալով ես ասացի. «Ամեն բան լաւ է, պարոն, բայց մէկ բան շատ վատ է. այդ այն է որ այստեղ պառաւ մարդիկ շատ հետաքրքիր են, շատ բանիր են հարցնում», լսողները ծիծաղից մեռմն, և խանը գետնի տակ մտաւ.

— Բալի, ատաց Մոհամէդ բէզը, իսկապէս այստեղի պառաները շատ բաներ են հարցնում. Բայց մի երիտասարդ էլ ինձ հարցրեց թէ արդեօք մենք այժմ նշանաւո՞ր հնք որպէս լաւ ձիաւորներ. Մենք ծիծաղեցինք և ասացինք որ աշխարհում իրանցին ամենալաւ ձիաւորն է, որ իրանցին իր ձիու վրայ նստած, նիզակը ձեռին՝ կարող է կանգնել մի ամբողջ զօրագնդի առաջ և կոռւել, որովհետև այդպիսի ժամանակ նա առիւծ է զառնում. Նա՝ այդ երիտասարդն յետոյ հարցրեց. «Դուք նետաձգութիւն գիտէք», — «Զէմշիդի ժամանակ՝ ասացի ես մենք կուռում էինք նետ ու աղեղով, ինչպէս հիմա էլ դեռ անում են թիւրքմենները<sup>1)</sup>», բայց այսօր ոչ մի ազգ չէ կարող միզ պէս վարպետութեամբ գործածել հրացանը»: Վերջը նա հարցրեց. «Դուք պարսիկներդ յայտնի՞ էք իբրև ճշմարտախօս մարդիկ», Մենք նոր գլխի ընկանք որ նա մեզ ձեռք էր առել և ծիծաղում էր. մեր մօրուքների վրայ, աեթէ դուք», ասացի ես, «այդ ձեռվ էք ուզում մեզ ստախօս կոչել՝ կարիք չկայ որ ձեզ նեղութիւն տաք. և եթէ Սլահի օրնութեամբ մենք կը մեռնենք՝ այդ ձեր գործը չէ ամենկին»:

«Նա տեսաւ որ ես բարկացայ, շարունակեց Մոհամեդը բէզը, և աշխատեց իրան արդարացներու համար՝ հաւաստիացնել մեզ որ ինքը մի հին գրքում կարդացել էր որ իբր թէ մեր ուսումն ու կրթութիւնը կայանում է միայն ձիավարժութեան, նետաձգութեան և ճշմարտախօսութեան մէջ, և հետեւ պէս հետաքրքրում էր իմանալ թէ իր կարդացածը ճիշտ է:

— Մի ուրիշ մարդ էլ, ասաց Թաղի Փէրաշը, մեզ մօտ եկաւ և շատ արտակարգ բաներ հարցրեց: Մի թարգմանի միշոցով, որը մի քիչ պարսկերէն էր ջարդում, նա ուզեց իմանալ թէ մենք ինչ տեսակ գլուխ ունենք: Մկդում մենք կարծենք թէ Փրանկները այդ ձեռվ են ողջութիւն և առողջութեան լուր հարցնում, ինչպէս մենք հարցնում ենք թէ «ինչպէս է ձեր ուղեղը», բայց յետոյ իմացաք որ այդ չէր, այլ նա ուզում էր անպատկառ փորձել և տեսնել թէ արդեօք պարսիկի գլուխը կոշտ է թէ փափուկ: Նա ինձ համոզեց որ

• 1) Պարսիկները ստուգարանում են թիւրքմէն՝ (թօրքէման) բառը որպէս կազմուած թիր և քաման բառերից որ նշանակում է Շնես ու աղեղը:

թոյլ տայի իրան շօշափել իմ գլուխը. ես թոյլ տուի և նա իր ձեռքով սեղմեց իմ գլուխը, և երբ նա փորձելով տեսաւ որ դա խսկապէս փափուկ էր, չափազանց ուրախացաւ և զնաց: Մի քանի ըսպէից յետ նա վերադարձաւ իր ընկերներից մի-երկուսի հետ, որոնք հերթով փորձեցին մեր գլուխները<sup>1)</sup>: Անք շատ զարմացանք նրանց այդ տարօրինակ հետաքրքրութեան վրայ, մանաւանդ որ իրանց մէջ այդպիսի բան չէինք տեսել. չէինք տեսել որ մէկ Փրանկ մի ուրիշ Փրանկի գլուխ շօշափէր կոշտ ու փափուկն ստուգելու համար: Մենակ վերջը կարողացանք իմանալ, որ նրանց այդ տարօրինակ հետաքրքրութեան և փորձի պատճառն այն էր, որ նրանց հինգրերից մէկում վրուած է եղել որ իրը թէ պարսկի գլուխը փափուկ է, և նրանք վերջապէս շատ ուրախացան երբ փորձելով տեսան որ իրանց գիրքը ճշմարիտն էր ասել. բայց մենք ի հարկէ չափազանց զարմացանք:

— Մի ուրիշ մարդ էլ, ասաց ախոռապետը, աշխատեց ծաղրել մեր ձիերին, բայց ես լաւ փոխարինեցի նրան: Նա հարցրեց. «Եթանուն ձեր մարդարէի, դուք ինչո՞ւ էք կարմիր գոյնով ներկում ձեր ձիերի պոչերը»: Եւ դուք, ասացի ես, ինչո՞ւ էք ձերոնց երկար պոչերը կտրում և կարճացնում:

— Մի ջահել դաշանդ (beau), ասաց Մահբարը, հարցրեց ինձանից, «Ո՞ւր է ձեր չէրքէզուհին, նա արկինների մօտ չէ»: «Ինչո՞ւ էք հարցնում» ասացի ես: «Ես ուզում եմ տեսնել նրան, Մեր երկրի օրէնքով նա չպիտի փակուած մնայ մի սենեակում»: «Գնա մեր դեսպանին ասա այդ խօսքը» ասացի ես, և նա մա-աը բերանին դնելով՝ հեռացաւ:

— Այս մարդիկը, ասաց Մէիդը, շատ ուրիշ նկատողութիւններ էլ են անում չէրքէզուհու վերաբերմամբ:

— Ինչպէս, ասաց դեսպանը.

— Նրանք ասում են որ ոչ ես եմ մարդ ոչ էլ Մահմուլը, նաև ասում են որ (գոնէ ինչպէս մենք հասկացանք) այստեղ մէկ կախարդ կայ, որը կարող է չէրքեզուհուն հանել իր սե-նեակից՝ ինչ ժամանակ որ ինքն ուզի: Ասում են որ ինչ էլ որ մենք անհնը, նա կարող է այդ բանն անել մի թալիսմանով որ այս երկրում կոչւում է Habeas Corpus: Նրանք ասում են որ ով որ կամենայ՝ կարող է նրան իր կիսը դարձնել. տանելով նրան Gretna Green անունով մի երկրի լեռները, ուր ապրում է մի դէրվիշ, որը երկաթագործ է և անկասկած, հմայլներ

<sup>1)</sup> Պարսիկների գլուխները փորձող Փրանկներն անտարակոյս պիտի կարգացած լինեն Հերօոդուէսը:

գրող: Որովհետև նա կարող է օտար մարդկանց ու կանանց առուսիններ դարձնել այնպէս հեշտութեամբ՝ ինչպէս մեր օրհնեալ Մարգարէն ոչխարին ուղարկը էր դարձնում:

—ի՞նչ իս ասում մարդ, ասաց գեսպանը հեղնաբար: Դուք շատ հաւատում էք ինչ որ ֆունկները ձեզ ասում են: Եթէ նրանք ձեզ ասեն թէ արեգակը հալուայից<sup>1)</sup> է շինուած, դուք շուտ կը հաւատաք: Նրանք ինչ գործ ունին չէրքեզունու հետ: Խեղճ կինը ամբողջ օրը նստուծ է մի անկիւնում և ոչ ոքի հետ գործ չունի:

—Ի սէր Ալիի, ասաց Մոհամէդ բէկը, ասացէք ով էր այդ սե շորերով մարդը որը գլխին ծածկել էր սպիտակ փոշի վրան ցանած մի պատուական գառան մորթէ գլխարկ և մի փոքրիկ վարագոյր էլ կախել էր աշդրերի վրայ: Նա տարօրինակ մարդ էր երեսում:

—Նա Փրանկների օրէնքի գլուխներից մէկն էր—մի մեծ մոլլան է, ասաց գեսպանը: Մեր շէյխօչէսլամները իրանց գլխին են փաթաթում երկար կտոր մարմաշ, բայց այդ մարդը իր թեխն է փաթաթում: Նրա շորերը նոյնը չէին ինչ նա սովորաբար հագնում է. միայն պաշտօնական հանդէմներում է որ նա հագնում է իր մարմաշ թեղանիքը: Այդ մարդը ինձանից հետաքրքրուեց թէ մենք արդեօք Պարսկաստանում եփրայեցներէն սովորմած ենք. բայց ես պատասխանեցի որ մենք ջնուզներին ատում ենք, որ նրանց լեզուն պիղծ լեզու է և մենք չենք կարող սովորել: Ես նրան ասացի որ արաբերէն սովորում ենք, նա շատ ուրախացաւ բայց էլի շեշտեց որ հարկաւոր էր եփրայեցէրէն էլ սովորել: Մի քիչ ժամանակ մենք խօսեցինք պարսկերէն և անզիէրէն լեզուների մասին, իս բոլորովին հաստատեցի մեր լեզուի առաւելութիւնը, հաւաստիացնելով նրան որ երեսուն տղայ է հարկաւոր մեր լեզուի բառարանը տանելու համար: Նա ոչինչ չկարողացաւ ասել, բայց նա ուսեալ մարդ էր և շատ լեզուներ գիտէր:

—Բայց այն կանայքը, միս այն կանայքը, ով աղա, բացականչեց ախոռապետը: Աղա, եթէ պառաւ կանայք չլինէին նրանց մէջ, նրանց շրջանը դրախտ կը լինէր, գրախտ: Այս աղխարհում ես նրանց նման դեռ չէի տեսել: Ի սէր Մարգարէի, աղա, ինզրում եմ նրանցից մի-երկուսին ձեզ հետ տարէք իրան և ընծայեցէք շահին. այս տարէք նրանց աղա, որ պէսզի մենք մեր վերագարձին ստախօսներ չհամարուենք:

1) Հալուայ մի աեսակ հասարակ քաղցցրաւէնիք է, որ շինում են Պարսկաստանում և Տաճկաստանում:

Անշուշտ Անգլիայի թագաւորը իր եղբօր խաթրու՝ որին նա սիրում է՝ առանց առարկութեան թոյլ կը տայ, որ դուք իր հպատակներից մի քանիսին տանէք մեր երկիրը:

— Խէնթ ես, այ մարդ, ասաց դեսպանը. դու անգլիացիներին և նրանց թագաւորին շատ քիչ ես ճանաչում: Եթէ որևէ է մարդ համարձակուի նոյն իսկ թագաւորի գործածութեան համար մի անգլիացու շուն բոնել տանել՝ առանց տիրոջ համաձայնութեան՝ տէրը կարող է մեծ աղմուկ հանել, ապստամբութիւն յարուցանել, մեծ կուսակցութիւն կազմել և զէնքով թագաւորի վէզիրներին անապատները քշել կամ ես այ մարդ, դէ՞ս հիմա մտածիր թէ կարելի՞ է թագաւորի հպատակներից մի քանիսին դուրս տանել իր երկրից:

«Ի դէպ, ասաց դեսպանը դառնալով ինձ, ովքեր էին այն կանայքը, որոնք իրանց գլխին մեր մէշիդների գմբէթների չափ մեծ բաներ ունէին: Ես կարծում եմ որ նրանք Հաջի Բարայի սեպհականութիւնն էին, այս, ես գրագ կը գամ որ նրանք Հաջի Բարայինն էին. ասա, հոգիս սիրես, այդպէս չէ»:

— Ի՞նչ աղաջեմ, ասացի ես, կեանքս դառնացնելուց յետոյ նրանք վերջին հարուածն էլ տուին՝ աղտեղութիւն ուտեցնելով ինձ:

— Եթէ դրանք նոյն պիղծ գազաններն են՝ որոնց դու մի քանի օր առաջ ծանօթացրիր ինձ հետ, ասաց դեսպանը, ավենայն խղճմտանքով պիտի ասել որ՝ մէկ անգամն էլ լի բաւական էր: Ինչեւ, եթէ նրանք փող ունին՝ էյր չունի (ֆլասչունի) բայց ի հարկէ դու չես մոռանալ մեր ընկերութիւնը, մեր պայմանը:

Ես շատ ուրախացայ որ ինձ յաջողուեց իմ սպասածից աւելի լաւ կերպով ազատուել. բայց դարձեալ ես զգում էի որ մեհմանդարը սաստիկ ծանրացած էր սրախ վրայ. սակայն լիայոյս էի որ շատ ժամանակ չանցած՝ ինձ կը յաջողուէր նրան լաւ հասկացնել թէ մենք որքան դժգոհ էինք իրանից:

### Գլ. իւէ.

Միրզա Ֆիրուզը մտածում է Պարսկաստան վիրադանալ: — Նա այցելում է մի նոր անձնաւորութեան: — Այդ այցելութեան հետեւանքը:

Աբդէն ութն ամիս էր որ մենք Անգլիայում էինք, և ձիշան ասած մենք սկսեցինք կարօտով մտածել մեր երկրի

մասին։ Դեսպանը շատ դառնութեամբ գանգատւում էր, թէ այն գործը որի համար ինքն ուզարկուել էր Անգլիայի թագաւորի մօտ՝ գեռ մնում էր անորոշ և անկատար, նու էլ միշտ առթից օգտուելով նրան համոզում էի որ երբէք չէ կարելի հաւատալ մէհմանդարի խօսքերին և որ գործի ուշանալու համար ինքը կը մեղադրուէր։ Վերջապէս դեսպանը, որի մտահոգութիւնը և անձկութիւնը օրէցօր աւելանում էր, մի օր մէհմանդարին իր մօտ հրաւիրելով՝ շատ դառնացած սրտով ասց.

— Վերջ ի վերջոյ, պարոն, մեր շահն էլ իր համար մարդ է, իրանն էլ իր համար մի երկիր է, մենք էլ մեզ համար մարդ ենք, մենք էլ տներ ունենք, մենք էլ փող ունենք, մենք էլ հողի արդիւնք ունինք. բայց պարզ երևում է, որ այստեղ մեզ վրայ նայում էք որպէս ձեր ծառաների. Դուք, պարոն, դեռ չէք ճանաչանում պարսիկներին. որ մի պարսիկը կը հաւատայ ինձ երբ ես ասեմ որ, եթէ Անգլիան ուզի իր բոլոր ուժերը հաւաքել՝ կարող է կուլ տալ բոլոր միւս երկիրները։ Եթէ ես այդ բանը պարսիկներին ասեմ նրանք կը ծաղրեն ինձ, գլխարկները թեք կը դնեն և արհամարհանքով ու տգիտաբար կը բացականչեն, «գուռ-է փեղար-է ֆարանդի»<sup>1)</sup>։ Յանուն Ալլահի, պարոն, իմ շահի խնդիրքներին մի պատասխան բեր և թող ես գնամ այստեղից։ Այսքան էլ ուշացնել կը լինի, մենք մեռմնք։

Մէհմանդարը դարձեալ իր սովորական ձեռվ պատասխանեց նրան։ Նա խնդրեց դեսպանին ի նկատի ունենալ որ երկու տէրութիւնների իրար հետ ունեցած գործը երկու անհատների գործի պէս գործ չէ։ Նա աւելացրեց որ բացի Պարսկաստանի Շահի դեսպանից՝ Անգլիայում կային և շատ ուրիշ թագաւորների դեսպաններ, որոնք բոլորն էլ շատ կարեւոր գործեր ունէին իր վեհապետի հետ Նա նաև ասաց որ, եթէ դեսպանը մի քիչ էլ համբերէր, անկասկած իր գործը կը վերջանար ի բաւարարութիւն երկու վեհապետներին էլ, և ինքն էլ շատ պատուվ կը վերապառնար իրան։

Միընք Ֆիրուզը յետոյ սկսեց կրկնել այն՝ ինչ որ դրաւնից առաջ էլ մի հազար անգամ ասել էր։ Նա ասաց որ իր Շահը բռնակալ է, որ նա մի վատ սովորութիւն ունի որ երբեմն կտրել է տալիս մարդկանց գլուխները և որ եթէ ինքը (դեսպանը) գործի այսքան ուշանալու համար մի կարգին բա-

1) Ֆրանկների հօր գեօւը (վերեգմանը). Մ. թ.

ցադրութիւն չկարողանար տալ՝ իր գլուխն էլ շատ հաւանականարար պիտի կտրուէր:

—Յանուն Ալլահի, պարոն, ասաց նա դեսպանին, աղաշում եմ, գնացէք ձեր վէզրի մօտ, ասացէք, երդութիւնից՝ որ ես մեռնում եմ վշտից, մտատանջութիւնից. ասացէք նրան որ այս բաղաքի ծուլը սպանում է ինձ, ասացէք նրան որ եթէ ես այստեղ մեռնեմ՝ արիւնս իր վզին կը մնար:

Մեհմանդարը երդուեց որ ամեն բան լաւ կը գնայ և մինոյն ժամանակ խորհուրդ տուեց նրան իր ժամանակն անցկացնել տեսնելով շատ բաներ՝ որ դեռ մինչեւ այդ ժամանակ չէր տեսել: Ի հարկէ, սա նրա սովորական պատճառաբանութիւնն էր, մենք լաւ գիտէինք այդ:

—Է՞ն, ի՞նչ բաներ, ի՞նչ տեսարաններ, բացականչեց մեր իշխանաւորը, շարունակ տեսարաններ տեսնել, դուք ինձ սպանեցիք այնքան այստեղ ու այստեղ վազեցրիք այս ի՞նչ այն ի՞նչ տեսարանները ցոյց տալու համար: Պարոն, անցեալ օր դուք ինձ մի տեղ տարաք ուր, ի՞նչպէս դուք ինձ հաւաստիացրիք, կատարւում են ձեր պետական բոլոր գործերը և ուր ես տեսայ մի խումբ կէս խելագարներ, բայց յանուն Ալլահի, պարոն, ով էր այդ ձևով գործ կատարել ի՞նչպէս կատարում էին դրանք: Եթէ դուք դրան տեսարան էք կոչում մենք էլ ուրեմն կարող ենք տեսարան կոչել մի Շահի դաֆտարխանէն, ուր մեծ վէզիրը նստում է առաւօտից մինչեւ երեկոյ՝ շրջապատուած հարիւրաւոր միրզաներով, մոլլաններով, խաներով, թաղապետներով, ույեաթներով և բոլոր ազգերից ուղարկուած սուլինանդակներով—սրան պատասխան տալով, նրան թելադրելով, ի՞նքը գրելով մի չորորդին հայնոյելով և մի հինգերորդին ֆարաշներին յանձնելով՝ փալախեային կապելու համար: Գործ՝ իսկապէս դրան կասեն. այդ՝ կարգին գործ կատարել է. բայց գնալ մի մեծ սենեակ, ուր հաւաքուած են մի քանի անհատներ—ոմանք նստած սպիտակ փոշի տուած մորթէ գլխարկով մի մարդու աջ կողմին և ոմանք էլ ձախ՝ բոլորն էլ զբաղուած իրանց վերաբերութիւն ունեցող գործերով—այդպիսի գործին դուք գործ էք ասում. ոչ, պարոն, դա գործ չէ, դա խաղ անել է, դա մարդու մօրուքի վրայ ծիծաղել է: Վերջապէս, պարոն, մենք պարսիկ ենք, մենք էլ կարգ ու կանոններ ունենք, մենք էլ ճանաչում ենք աշխարհը, մենք էլ գիտենք գործն ի՞նչ է:

—Այդ օրը որ մենք գնացինք այնտեղ՝ ասաց մէհմանդարը, գժբախտաբար մեր լաւ ճարտասաններից ոչ մէկը չխօսեց. և ճշմարիտ է այդ օրը մեր պարլամենտական տունը չէր կարող

շատ լաւ տպաւորութիւն թողնել ձեզ վրայ։ Այնտեղ այդ օրը  
գիմադրող կողմից միայն մէկ մարդ էր խօսում։

—Դիմադրող կողմը, բացականչեցի ես. մըթէ դրանք  
ապստամբներ չեն։

—Ապստամբներ, ասաց մէհմանդարը, այդ ինչ խօսք է։  
Մի մարդ կարող է կարծիքով ու գաղափարով տարբերել  
մի ուրիշ մարդից, բայց դրանով նա ապսպամբութիւն չէ ա-  
նում։

—Պարսկաստանում մենք այդպէս չենք հասկանում, ա-  
սացի ես Շահը շատ ողորմելի թագաւոր կը լինէր, եթէ իր  
աէրութեան մէջ ունենար իրան հակակարծիք մարդիկ։ Ես  
կարծում եմ, ասացի ես դառնալով դեսպանին, որ դուք մի  
ծառայութիւն արած կը լինէք այս երկրին, եթէ Անգլիայի  
թագաւորին խորհրդատրէք որ այստեղի գիմադրող կուսակ-  
ցութեան հետ վարուի ճիշտ այնպէս, ինչպէս Շահ-Արքասը  
վարուեց հայերի հետ, որոնց մի մասը նա փոխադրեց Մազան-  
դրան, մի մասը Նոր-Զուղա և մի մասն էլ ցրուեց Պարսկաս-  
տանի զանազան կողմերը ու այդպիսով ջլատեց նրանց ոյժը  
որպէս մի մարմնի։

—Դու վատ չես ասում, Հաջի, ասաց դեսպանը, հաւանե-  
լով իմ առաջարկութիւնը։

Մէհմանդարը լոեց ինչպէս մի մարդ, որը կարող էր շատ  
բան ասել բայց չէր կամենում։

Նա յետոյ յիշեցրեց դեսպանին որ այդ օրը նա խօսք էր  
տուել ընթրելու մի հարուստ սեղանաւորի ամառանոցում, ուր  
նա կը տեսնէր անգլիական թագաւորի այդ դասակարգի մարդ-  
կանց վարը ու բարքը։

—Եկէք գնանք այստեղից, ասաց դեսպանը, առ երկոյթ  
յուսահատութեամբ. այն, գնանք, այնքան տեսանք ու տես-  
նուեցինք որ հոգիս դուրս եկաւ, լիարդու ջուր կտրեց։

Նա յետոյ հրամայեց ինձ ու Մոհամէդ բէզին որ պատ-  
րաստուէինք իրան հետ գնալու, երեկոյեան դէմ մենք հասանք  
ծառերով շրջապատուած մի տուն, երեք ֆարսաղ քաղաքից  
դուրս։ Գեղեցիկ տեղ էր. եթէ այդ տունը Պարսկաստանում  
լինէր մեր պարսիկ շահզադէներից մէկն ու մէկը կը տիրանար  
դրան, նվ էլ որ լինէր դրա տէրը։ Մառերը բազմաթիւ էին,  
ջուրը վազում էր ամեն կողմով, ծաղիկներն էլ գոյնզգոյն ու  
գեղեցիկ էին։

Տան դրան դեսպանին ընդունեց մի հաստիկ, գործի  
մարդ, իսկ զահլիճի դրան՝ մի տիկին և իր աղջիկները, որոնք  
շրջապատուած էին մի խումբ տղամարդկանցով ու կանանցով

Նրանց կերպարանքում կար մի ինչ որ բան որ տարբերում էր նրանց այն հասարակ անհաւատներից, որոնց մէջ մենք սովորաբար ապրում էինք: Մոհամէդ բէզք, որը մի անմաքուր բանի մօտենալով իր չափազանց սուր բնազգով իսկոյն հասկանում էր որ դա անմաքուր է, առաջինն եղաւ որ նկատեց թէ նրանք հրէաներ են:

—Հրէաներ, չեմ կարող հաւատալ, ասացի ես: Մէհմանդարը մեզ մուսուլմաններին՝ մանաւանդ Շահի ներկայացուցչին երբէք այնքան չէր ստորացնիլ որ բերէր հրէաների մէջ:

Մօտից զննելով մենք սկսեցինք համոզուել որ նրանք իսկապէս հրէաներ էին, և դեսպանին էլ հասկացրինք այդ բանը: Նա ըստ երևոյթին վրդովուեց և ինքն էլ լաւ նայելով տեսաւ որ մեր դիտողութիւնն սխալ չէր, բայց քանի որ իր քրիստոնեայ բարեկամներից մի քանիսն էլ նրանց խմբումն էին՝ նա ոչինչ չարտայայտեց:

—Ուրեմն միայն Պարսկաստանում չէ որ հրէաներ կան, ասացի ես, այստեղ էլ կան. բայց տես ինչ հրէաներ. իշխաններ են նրանք: Նայիր այդ շներին, տես ինչ դիրք, ինչ վիճակ, ինչ փառք ու պատիւ ունեն: Օ՛, Ալիի մորուքը վկայ որ եթէ այդ շները Պարսկաստանում լինէին՝ ես առաջինը կը լինէի որ կը թքէի նրանց երեսին ու կը թալանէի նրանց որքան որ կարողանայի:

—Մէհմանդարը շատ սխալ բան է արել որ մեզ բերել է այստեղ, ասաց ընկերս բարկութեամբ. մենք նրա հայրը կայրենք!

—Բալի, կայրենք, ասացի ես շատ ուրախանալով, որ լաւ պատճառ էի ունենում վրէժ առնելու նրանից:

Մինչեւ մենք այդպէս խօսում էինք, մեզ մօտ եկաւ նրանցից մէկը ու ողջունեց մեզ: Մոհամէդ բէզք այնքան զըզուեց նրանից, որ իսկոյն միւերկու անդամ ասթափորէլլահ կրկնից և իր վերարկուի փէշերը իրար վրայ քաշեց:

—Տես, ասաց նա ինձ, տես՝ ահա այդ պիղծ ցեղից մէկը: Ի սէր Խմամ Հօսէյնի, եկէք վարուենք սրա հետ այնպէս, ինչպէս կը վարուէինք Պարսկաստանում:

—Թող նախ տեսնենք թէ նա ինչ ունի ասելու, ասացի ես, յետոյ մի բան կ'անենք:

Այդ բոպէին մեզ մօտեցաւ կորացած մէջքով, բաժակակալի չափ մէծ-մէծ աչքերով և ուռած կոպերով մի հաստակաշի հրէայ և հարցրեց մեզանից:

—Պարսկաստանից դուք ձեզ հետ թանկագին բարեր, մարդարիտներ չըք բերած:

— Ո'չ, պատասխանեցի ես, անգլերէն լեզուով. դուք պողպատ էք ուզում:

Նա ծիծաղեց, խօսքս կատակի տեղ վերցրեց, յետոյ հետաքրքրուեց թէ արդեօք մենք օտար տէրութեան ոսկի չունէինք մասրելու կամ փոխստուր անելու, և սկսեց հետևել մեզ այնքան մեր պոչին կպած որ ես հաւատում եմ որ Մոհամէդ բէզը մի փառաւոր բռունցք կը խփէր նրա ականջին, եթէ ես չարգելէի նրան:

— Դնա, պարոն, ասացի ես, մենք հրէաներ չենք, մենք մուսուլմաններ ենք:

Նա հեռացաւ բայց շուտով վերադարձաւ իր հետ բերելով մի ուրիշ մարդ, որի կերպարանքից երկում էր որ հրէայ չէր: Սա սկսեց խօսել մեզ հետ ասելով թէ «այսօր սիրուն օր է» և հետաքրքրուեց թէ արդեօք մենք Էլ մեր երկրում իրանց պէս գեղեցիկ պարտէզներ և տներ ունէինք: Ես պատասխանեցի որ ևթէ Պարսկաստանում այնպիսի տներ և պարտէզներ լինէին՝ նրանք չէին կարող հրէաների սեպհականութիւնը լինել ինչպէս էին Անգլիայում:

— Ուրեմն, գուցէ դուք չէք սիրում հրէաներին, ասաց նա

— Ո'չ, պարոն, մենք չենք սիրում, մենք ատում ենք նըրանց, ասացի ես: Քրիստոնեաները վատ են, տաճիկները վատ են, չները վատ են, բայց հրէաները ամենից աւելի վատ են: Դուք հրէայ էք պարոն, չէ:

— Ո'չ, պարոն, պատասխանեց նա, ես հրէայ չեմ, ես համեմավաճառ եմ:

— Համեմավաճառո, ասացի ես, այդ Բնչ տեսակ կրօն է:

— Օ՛, ասաց նա ծիծաղելով, այդ կրօն չէ, այդ վաճառականութիւն է: Մենք գնում ու վաճառում ենք շաքար, սուրճ, պղպղեղ, մանանեխ և այլ տեսակ համեմաներ:

Ես նոր գլխի ընկայ որ նա իսկապէս մի բաղկալ էր:

— Մաշալլահ, ասացի ես Մոհամէդ Բէզին. մենք լաւ տեղ եկել, լաւ մարդկանց մէջ ենք ընկել:

Եւ դառնալով իմ նոր բարեկամին հարցրի:

— Դուք շատ հարուստ էք:

Բաւական մեծ ինքնաբաւականութեամբ նա պատասխանեց.

— Այն, ես հարուստ եմ, շատ հարուստ: Անգլիայում մենք ասում ենք հրէայի չափ հարուստ, բայց ես չեմ հասկանում թէ Բնչու չափափ ասել համեմավաճառի պէս հարուստ:

Ես նրան հասկացրի որ ինքը շատ բախտաւոր պիտի համարէր իրան, որ Անգլիայում էր ապրում, որովհետև եթէ

Պարսկաստանում լինէր նա՝ Շահը նրա բոլոր հարստութիւնը կը ծառայեցնէր հասարակութեանը:

— Շահը, աւելացրի ես, ձեզ կը պարտաւորեցնէր մի քաղվանսրա շինել, ինչպէս Շահ-Աբրամը պարտաւորեցրեց իր հարուստ քաղաքացիներն։ Եւ եթէ դրանով էլ չըաւականանար, կը ստիպէր ձեզ մի համարսարան հիմնադրել, մի մէջիդ կառուցանել և մի խումբ մոլլաներ պահել ձեր հաշուին։

— Ա՛, ասաց համեմավաճառը, մենք այստեղ բաւական մեծ հարկեր և մաքսեր ենք վճարում, բայց այդ ծայրայեղութուններին երբէք չենք հասնում։

Ըսթրիքի ժամանակն էր. հիւրերի մի մեծ խումբ նստաւ մի ճոխ սեղանի շուրջ, որը ծածկուած էր այնքան բազմատեսակ կերակուրներով, որոնցից աւելի լաւը ոչ մի տաճիկ խոհարար չէր կարող պատրաստել։

Դեսպանը նստաւ երկու հրէաների մէջ տեղ. մէկը տղամարդ, միւսը կին։ Այդ բանը տեսնելով ես ու Մոհամէդ բէդը սաստիկ զայրացանք և չէինք կարողանում մեզ զսպել։

— Ի՞նչ կ'ասէր մեր Շահը, ասացինք մենք, եթէ նա տեսնէր իր ներկայացուցչին այս դիրքում։ Ամօթ չէ, որ նա իրան թոյլ է տալիս նստել այսպիսի զգուելի արարածների մէջտեղում։ Նա մոռացել է, որ ինքը մուսուլման է, նա շանից էլ պակաս անսասուն է դառել։

Երբոր մենք էլ սեղան նստանք, Մոհամէդ բէդի զգուանքն ու վրդովմունքը աւելի սաստկացաւ և նրա բոլոր մահմեղական սկզբունքները աւելի զարգացան ու զօրեղացան։

— Ստորութեան ամենավերջին աստիճանն է, ասաց նա։ Այստեղ դորանի բոլոր խրատներն ու պատուէրները անարգում են։ Նայիր մեր դեսպանին, այդ մուսուլմանին տես։ Նա մրտեղ է նստել—աջ ու ձախ կողմին հրէաներ, առաջեր՝ անհաւատներ, ետել՝ անհաւատներ, գինին ձեռքումը, պիղծ գազանի մսի կտորներից էլ անկասկած քթի տակին, և նա խօշ գօղերան<sup>1)</sup> է անում առանց քաշուելու, առանց ամաշելու։ Պակասում է նրան երկու բան—որ իր երեսը սափրի և ֆրանկի գլխարկ ծածկի՝ այն ժամանակ կատարեալ անհաւատ կը դառնայ։

Մենք վերջապէս վերադառնք բաղաք, անշուշտ շատ դժգոհ սրտով։ Դեսպանը ոչինչ չխօսեց կառքումը. եթէ մեր կողմից էլ համարձակում էինք խօսել, միայն մեր զգուանքն ու ատելութիւնն էիք յայտնում ֆրանկների դէմ։ Մէհման-

1) Քէփ է անում, ուրախ է անցկացնում։

դարի հետ էլ այնպիսի մի ձևով էինք խօսում՝ որ նա լաւ հասկացաւ թէ մենք ինչքան էինք ատում իրան:

—Կան այնպիսի անձինք, ասաց Մոհամէդ բէգը, որ կարծում են թէ իրանք աւելի իմաստուն են քան Ասաֆը. <sup>2)</sup> բայց իսկապէս նրանք տիսմարութեան պապերն են <sup>3)</sup>:

—Այս, ասացի ես, եթէ Սուլէյմանի վէզիրները այդպիսի տիսմար մարդիկ լինէին, նա այսօր այդքան մեծ անուն չէր ունենալ, նա այսօր չէր համարուիլ որպէս իմաստնագոյնը մարդկային էակների:

Ինչէւ, մեհանդարն անդադար գովեց մեր գնացած տան գեղեցկութիւնը, ընթրիքի ճոխութիւնը, և տան տիրոջ և տիրուհու քաղաքավարութիւնը. և հէնց որ մենք սկսում էինք հրէաների վրայ յարձակուել, միակ խօսքը որ նա կարողանում էր ասել ի նպաստ նրանց, այս էր թէ նրանք էլ մեզ պէս մարդիկ են, նրանք էլ Ալլահի բանդէք (արարածներ) են, ուստի նրանք էլ նրա ողորմութեան առարկաներն են»:

### ԴԼ. ԽՈՐ.

Մի անզիմացի սուրբ մարդ այցելում է դիսպանին: —ԱՇԽ ընծաների մասին որ նա թերում է: —Թու; ինչ չարիք է առաջանում:

Ամբողջ հետեւալ առաւօտը, Մոհամէդ բէգն զբաղուեց իր անձը մաքրելով և սրբելով այն ապականութիւնից, որ կպել էր իրան՝ հրէաների մօտ գնալով: Նա լուաց իր մարմինը, կրկնակի աղօթք արեց և մի ամբողջ օր չհագաւ իր մետաքս վարտիքը:

Ես ի հարկէ նրա պէս երկբայութիւններ չունենալով՝ չարեցի ինչ որ նա արեց, բայց ուրախ էի որ առիթ էի ունենում վրէժ առնելու մէհմանդարից, որը թէպէտ երբեմն շատ քաղցրութեամբ էր վարւում հետո, բայց մեծ վէզըի մահից յետոյ ընդհանրապէս արհամարհանքով էր վերաբերուել դէպի ինձ:

Մենք պատմեցինք մեր ընկերներին թէ ուրտեղ էինք գնացել, թէ ինչպիսի հրէաներ էինք տեսել և այլն: Մեր պատմութեամբ մենք գրգռեցինք նրանց զզուանքն ու ատելութիւ-

2) Ըստ արեւելեան պատմութեան՝ Ասաֆ՝ Սուլէյմանի մեծ վէզը անունն էր, Մուսուլմանները նրան կատարելութեան տիպար են համարում:

3) Էշեր:

նը դէպի հրէաները, թէպէտ բոլոր պարսիկներն առանց գըրդ-  
ման էլ սաստիկ ատում են նրանց:

«Զհուդների օրուայ» հետևեալ օրը Միրզա Ֆիրուզին այ-  
ցելեց մի անգլիացի մոլլահ, որը հագել էր իր կարգին վիրա-  
բերելի զգեստը և իր ձեռքում ունէր երկու քրիստոնէական սուրբ  
գրքեր—մէկը աղօթագիրը, իսկ միւսը էնջիլ (աւետարան):

Մէհմանդարը շատ ահաւոր դէմքով յայտարարեց նրա գա-  
լուստը: Մենք շարուցինք դեսպանի շուրջը, և մի-երկու րո-  
պէից յետ՝ մոլլահն ներս մտաւ մի քանի անգամ գլուխ տա-  
լով: Մէհմանդարը խնդրեց դեսպանից որ յունկոյս ընդունէր  
նրան: Նա սիրով, կատարեց նրա խնդիրը, և մոլլահն իր շո-  
րերի տակից հանելով մի մագաղաթ՝ որ շատ գեղեցիկ կեր-  
պով գրուած ու զարդարուած էր՝ լսելի ձայնով և ազգու ա-  
ռողանութեամբ կարդաց մի ուղերձ, և յետոյ դեսպանին մա-  
տուցեց իր բերած երկու գրքերը:

Ապա մէհմանդարը թարգմանեց մոլլահի ճառը, Դա մի  
ուղերձ էր որ գրել էին մի խումբ մարդիկ, որոնց գործն էր  
ժողովներ ունենալով ոչ-քրիստոնեաներին քրիստոնեայ դարձ-  
նելու համար: Ուղերձի մէջ ասւում էր, «Ալլահի փառքն աչքի  
առաջ ունենալով կնրա սահմանած օրէնքները դեսպանի պէս մի  
նշանաւոր օտարականին նուիրելու համար ամենայարմար ընծան  
համարելով՝ մենք համարձակուում ենք ձեզ ընծայել մի օրինակ  
մեր սուրբ գրքից և մի օրինակ էլ մեր աղօթագրքից: հետևարար  
մենք ուղարկում ենք մեր բարտուղարին որպէս զի այդ ընծա-  
ները մատուցուի ձեզ»:

Չպէտք է ուրանալ որ Միրզա Ֆիրուզը շատ մեծ քաղաքա-  
վարութեամբ վարուեց և շատ յարգանքով ճանապարհ գրեց մոլ-  
լահին: բայց հէնց որ վերջինս հեռացաւ և մենք էլ դուրս  
գնացինք դահլիճից, Մոհամէդ բէգը առաջինն եղաւ որ բողո-  
քեց թէ դեսպանն իսավի (քրիստոնեայ) է դարձել:

—Ի հարկէ նա իսավի կը դառնայ, ասաց նա, որովհե-  
տև այդ անսմօթ մէհմանդարը բոլորովին գերել է նրան, և  
միշտ աշխատում է նրան անջատել մեզանից, խորթացնել մե-  
զանից: Նա՝ այդ անիծած մէհմանդարը նրան բոլորովին զցել  
է իր անհաւատ հայրենակիցների ճանկը: Նա նրան բոլորու-  
վին ստորացրեց՝ բարեկամացնելով նրան աշխարհիս ամենա-  
ստոր մարդկանց հետ—ջնուդների և մոմավաճառների հետ:

Մոհամէդ բէգի այս խօսքերը մեծ աղղեցութիւն ունե-  
ցան մեր հայրենակիցների վրայ. որովհետև նրանք սկսեցին  
վախենալ որ մի գուցէ իրանք էլ պարտաւորուէին փոխել ի-  
րանց հաւատը: Մէիդն ու Մահմուքը մտահոգութեան մէջ ըն-

կան, և այդ հանգամանքը շուտով յայտնեցին և՝ չերքէզուհուն, որը սովորել էր այնպէս ճշտութեամբ և բարեպաշտութեամբ կատարել մեր կրօնի բոլոր օրէնքները, որ նա ամբողջ օրը իր ժամանակն անց էր կացնում լուացման արարողութիւնը կատարելով ու նամազ (աղօթք) անելով:

Նա՝ չերքէզուհին սարասկել էր երբ լսել էր որ իր տիրոջ սկզբունքներն այդպէս փոխուել էին. բայց նա արիութեամբ շատ խիստ խօսքերով դատապարտեց նրան՝ որ թողնելով իսլամի մաքուր և ճշմարիտ կրօնը՝ անհաւատ էր դարձել:

Նրանք որ ականատես են ողել էլքուրդ լեռների վրայ հաւաքուող փոթորկին, գուցէ կարող կը լինին երեակայել այն կատաղութիւնը որ բորբոքուեց Միրզա Ֆիրուզի կրծքում. Դրա աւաջին սաստկութեան ձայնը նախ լոււեց չերքէզուհու սենեակից, յետոյ սանդուխքների վրայ, մինչև վերջը ամենասուկալի ուժգնութեամբ պայթեց այն սենեակում, ուր մենք հաւաքուած էինք:

—Ո՞վ է համարձակուում ասել որ ես Փրանկ եմ դառել, որոտաց նա: Ո՞վ է ասում որ ես բիդին (անկրօն) եմ դառել, որ պիղծ բրիստոնեայ եմ դառել, որ այլևս չեմ սիրում իսլամութիւնը: Մոհամէդ բէգ, գնւ, դռւ ես մէկը որ այդպէս ես ասում իմ մասին: Հաջի, դու էլ երկրորդն ես. ես ինչ եմ արել որ դուք այդպիսի բաներ էք ասում իմ մասին. խօսեցէք մարդիկ, խօսեցէք:

Մոհամէդ բէգը խորին ակնածութեամբ պատասխանեց.

—Ես շանից էլ պակաս եմ, բայց և այնպէս, պիտի խօստապահնեմ որ՝ երբ տեսայ որ Շահի ներկայացուցիչը բարեկամանում է ջնուդների հետ՝ շատ վատս եկաւ: Դրանից աւելին ինչ ասեմ:

—Եւ դու մի ես, դու երկարամօրուք էշ, որ համարձակուում ես քննադատել իմ վարմունքը, կարծիք յայտնել իմ արած-չարածի վրայ: Միթէ դու կարծում ես որ ես—պարտաւոր եմ քեզանից խորհուրդ հարցնել թէ ինչ տեղ գնամ, ինչ տեղ չգնամ, ինչ խօսեմ, ինչ չխօսեմ: Շահը քեզ թոյլ է տուել ինձ հետ այստեղ գալ՝ ինչի համար.—Նրա համար՝ որ միշտ մի երկար ճիպոտ ձեռքումդ քայլես առջեկիցս, մի քանի անիմաստ խօսքեր ասես, մի քանի անօգուտ գլուխներ իջեցնես և իմ վարք ու բարքի մասին ամեննեին գլուխդ չցաւեցնես: Իմ գործի, իմ վարմունքի համար՝ ես հաշիւ պիտի տամ միայն նրան՝ որն ինձ ուղարկել է այստեղ, և ոչ թէ քեզ պէս մի շանը:

—Մենք մուսուլման ենք, ասաց Մոհամէդ բէգը, և ամեն

մի իսլամի զաւակ իրաւունք ունի նկատողութիւններ անել այն բանի վրայ, որ հակառակ է մեր կրօնին: Թէպէտ ինքս ոչինչ եմ, բայց մեր կրօնը մի բան է մեզ համար, և, ինչպէս Հաջի Բարան գիտէ, ոչ մի բան, չէ կարող ինձ հրապուրել կամ ստիպել որ մոռանամ իմ կրօնը և անհաւատ դառնամ:

—Եւ դու, Հաջի Բարա, ասաց գեսպանը, դառնալով ինձ —և դու, ինչպէս պատահեց որ այդպէս յանկարծ Ալլահի ծառան դարձար, դու՝ որ ամբողջ կեանքումդ մեղք ես գործել, ուրիշների մալը (ինչը) կլանել ես, դու՝ որ հայրենակիցներիդ աշխից ընկար տաճիկ դառնալուդ համար, և յետոյ տաճիկներից էլ աքացիներ կերար խաբերայ, աւազակ լինելուդ համար. այս, դու, դու, թշուառական, ասա, ինչո՞ւ ես այսպէս բաներ ասում իմ վրայ:

—Զեր մօրուքը վկայ, ով գեսպան, ես ոչինչ չեմ ասել, ոչինչ չեմ արել, ասացի ես: Մոհամէդ բէզը որ մի ճշմարիտ մուսուլման է՝ շատ վրդովուեց, ցնցուեց, երբ տեսաւ որ գուք խառնում էք ջնուդների հետ, և այսօր էլ երբ այդ ֆրանկ մուշտէհիդը այցելեց ձեզ՝ և դուք էլ նրանից ուրախութեամբ ընդունեցիք անհաւատների սուրբ գիրքը՝ նա մեզ հաւատացրեց որ դուք արդէն հաւատափոխ էիք եղել:

—Այ դուն պառաւ շուն, գոռաց նա Մոհամէդ բէզին վրայ, դու այդպիսի ստեր ես խօսում, և այպպիսի ստեր խօսելուց յետոյ, քեզ դարձեալ մուսամէլման ես կոչում: Բայց ես ինչո՞ւ կրեմ այդքան անպատւութիւն. ես Շահի ներկայացուցիչ եմ, և եթէ Շահը ինքն այստեղ լինէր՝ նա իսկոյն գլուխոդ կտրել կը տար. բայց քանի որ ես բարի մարդ եմ, գլուխոդ չեմ կտրիլ, այլ կը պատժեմ քեզ միայն մի քանի հարուածներով: Տղէրք, կօշիկը հասցրէք դրա բերանին, հրամայեց նա մեզանից մի քանիսին:

Եւ քանի որ նա ինձ մատնացոյց արեց որպէս գլխաւոր գործակատար, ես էլ պարտաւորուեցի իսկոյն կոշիկս վերցնել և տուր թէ կտաս նրա բերանին: Ես շատ աշխատեցի որ մի վնաս չհասցնէի նրան, այնուամենայնիւ յակամայից կոտրեցի մի փտած ատամ, որ վերջին ծեծից յետոյ նրա բերանում ծառայել էր որպէս պահապան: Խեղճ բարեկամս կերաւ և ցաւով ու բարկութեամբ հեռացաւ դեսպանի ներկայութիւնից:

Ես լսեցի որ նա յաւիտենական վրէժ ուխտեց և ինձ էշ ասաց.

—Այ դու բարախտ (վատարախտ) մարդ. դու ինչո՞ւ խփեցիր ատամիս. դու աւելի լաւ պարտականութիւն էիր կա-

տարում այն ժամանակ՝ երբ Փէրաշ էիր և մարդկանց ոտի  
մատներին էիր խփում։

Ես երդուեցի մեր սուրբ ղորանով՝ որ ճար չունէի, որով  
հետեւ քանի որ դեսպանը՝ իմ իշխանաւորը հրամայել էր ինձ  
զարկել, ես ստիպուած էի նրա հրամանը կատարել, եւ ես  
խնդրեցի նրանից, որ եթէ երբեցէ իրան հրամայուէր նոյն  
պատիժն ինձ տալ, երբէք չխնայէր ինձ։

Ցետոյ ես աշխատեցի սփոփել նրան, Նա շատ մխիթար-  
ուեց, որովհետեւ նա միշտ ամեն բան վերագրում էր ճակատա-  
գրին, Նա շուտով հանգստացաւ և մինչև իսկ շնորհակալ եղաւ  
իր կրած պատժի համար։

Կեղտոտ հողից, ասաց նա, դուրս են գալիս պտուղներ  
և վարունգներ. այնպէս էլ չարիքից դուրս է գալիս բարիք։  
Այժմ ես կարող եմ ամենայն ապահովութեամբ զլուխս բար-  
ձիս դնել և վստահ ու միամիտ լինել որ որդիս կենդանի է։  
Այլևս երազում չեմ տեսնիլ որ իբր թէ սիրած ատամն ըն-  
կել է, որովհետեւ այդ ատամն այլ ևս չկայ, բայց գալով մեր  
իշխանաւորին (ինշալլան ջուր կտրի նրա լեարդը) դու շուտով  
կը լսես որ նրա զաւակը մեռել է. որովհետեւ երեք գիշեր որա-  
նից առաջ նա ինձ ասաց որ իբր թէ ինքն երազում տեսել  
էր որ իր ատամներից մէկն ընկել էր. 1)

Մի տաքացրած թուզ դնելով ընկերիս ծնօտին և նրա  
երեսը թաշկինակով կապելով՝ մենք սկսեցինք ղայլան ծխել։  
Սիրտներս հանգստան, և երեկոյեան մենք արդէն պատրաստ  
էինք մի ուրիշ տեսարան տեսնելու։

Մենք ծրագիր կազմեցինք հայրենիք վերադառնալու, և  
թէպէտ Անգլիայում շատ բաներ կային, որոնցից զրկուելու  
համար մենք կը տիրէինք, այնուամենայնիւ մենք համաձայ-  
նեցինք որ անհաւատների երկիրը այն տեղը չէր՝ որտեղ ճշշ-  
մարիտ հաւատացեալները կարողանային ապահովութեամբ ի-  
րանց վրանները կանգնեցնել։

— Ճշմարիտ որ գարեջուրը շատ լաւ բան է, ասաց Մոհա-  
մէդ բէգը. տես, այս անհաւատներն ի՞նչ լաւ, ի՞նչ հազուա-  
գիւտ բաներ ունեն—այնպիսի բաներ՝ որ մենք գնահատում  
ենք։ Մի ճշմարիտ հաւատացեալ կարող է ամենայն իրաւուն-  
քով կործ ածել այդ խմիչքը, որովհետեւ դա ոչ գինի է, և ոչ  
ջուր. եթէ մեր օրհնեալ Մարգարէն կարողանար գարեջուր

1) Երազում ատամ ընկնելը՝ պարսիկները իրանց սիրելիներից  
մէկի մահուան չար գուշակ նշանն են համարում, ծ. թ.

դարձնել այն կաթը, որ մեզ խոստացած է գրախտում՝ ինչ  
մեծ բարիք պատրաստած կը լինէր մեզ համար:

—Ուրեմն, ընդունիր, ասացի ես, որ այստեղի կանայքն  
էլ հազիւագիւտ գոհարներ են. որչափ աւելի լաւ կը լինէր՝  
եթէ նրանք խառնուէին տղամարդկանց հետ և...

—Բավի, բավի ասաց ընկերս ընդհատելով ինձ. կինս ծե-  
րանում է, և ինշալլահ, ես դիտաւորութիւն ունիմ մի ջահիլ  
կին առնել, երբ վերադառնամ Պարսկաստան: Բայց, հաջի, եթէ  
մենք էլ այս անհաւատների պէս իրաւունք չունենայինք մէկից  
աւելի կին առնել, ես կը ստիպուէի ամբողջ կեանքումս իմ  
պառաւ կնոջը պահել և նրանով բաւականանալ:

—Այդ աւելի լաւ է, ասացի ես. աւելի լաւ է ունենալ  
մի պառաւ և անյօդդողդ կին՝ քան մի ջահիլ և վայրենի աղ-  
ջիկ: Փոխադարձ սովորութիւնները յարմարում են իրար այն-  
պէս՝ ինչպէս մի արադչին երկար գործածութեամբ այնքան  
յարմարում է գլխին՝ որ կազմում է դրա մի մասը. սակայն  
ինչպէս իւղը չէ կարող ջրի հետ խառնուել, այնպէս էլ ջահիլ  
կինը երբէք չէ կարող սիրով և համերաշնութեամբ ապրել մի  
պառաւած մարդու հետ, և ոչ էլ պառաւ մարդը կարող է հան-  
գիստ մնալ ջահիլ աղջկայ քմահաճոյընների առաջ:

—Ա՛, ասաց Մոհամէդ բէզը, այս երկրում, ճիշտ է, շատ  
բաներ կան որ լաւ են, շատ բաներ էլ կան որ շատ վատ են.  
բայց ոչ մի բան այստեղ չէ կարող մեր երկրի պայծառ արևի  
տեղը բռնել: Այստեղ արեւ աւելի նսան է մեր լապտերներից  
մէկին՝ քան այն պայծառ լոյսի գնդին, որով օրհնուած է իս-  
լամի երկիւրը, իսկ այստեղի լուսինը հօ ոչինչ է, ոչինչ:

Մենք վերջապէս վճռեցինք ամեն ջանք գործ դնել  
և Պարսկաստան վերադառնալ որքան կարելի էր շուտ: Մի-  
ենոյն ժամանակ համաձայնեցինք թէ որքան աւելի շատ  
շուտ կարողանայինք Միրզա Ֆիրուզի սիրաը կտրել Անզլիայ-  
ից, այնքան աւելի լաւ կը լինէր մեզ համար, և այնքան աւե-  
լի շուտ դուրս կը գնայինք անհաւատների միջից:

—  
Գլ. Խթ.

Մի տեսարան Լոնդոնի մեծ փողոցներից մէկում:

Տարակոյս շկար որ մի չար աստղ խոտորնակի էր փայ-  
լում մեր վրայ, որովհետև բացի նախընթաց զլխում յիշածս  
թշուառութիւններից որ մենք կրեցինք, և որոնք մեծ խռովու-

թեան պատճառ դարձան դեսպանի տան մէջ՝ մեզ պատահեց մի ուրիշ դէպք էլ՝ որը աւելի վատացրեց դեսպանի արդէն փչացած տրամադրութիւնը և մեզ համար ճանապարհ հարթեց շուտով մեր երկիր վերադառնալու:

Մի երեկոյ երր Միբզա Ֆիրուզը մենակ նստած ողբում էր իր գառն վիճակը և մտածում էր թէ ինչու այդ բան յետածգում էր Անգլիայի վեզիրների հետ իր ունեցած գործի կատարութիւնների, և միւնոյն ժամանակ էլ ծրագիր էր կազմում Պարսկաստան վերադառնալու, մենամանդարը սաստիկ նեղացած ներս մտաւ:

—Ի՞նչ է պատահել, հարցրեց դեսպանը, չի՞նի թէ Պարսկաստանից լուր էր ստացել, չի՞նի թէ Շահը վախճանուել է:

—Այնքան մեծ բան չէ պատահել, փողոցներում մի բիչ աղմուկ կայ, պատասխանից մէհմանդարը:

—Ահամդ օլ Ալլահ, բացականչեց դեսպանը: Ձեր դէմքը ինձ վախեցրեց. ես կարծեցի թէ մի սոսկալի աղէտ էր պատահել:

—Ճիշտ է. մի բան պատահել է, և այդ բանը մասսամբ կապ ունի ձեզ հետ, սսաց մէհմանդարը:

Դեսպանը յուղուեց և նա իսկոյն մի չնչով հազար հարց տուեց մէհմանդարին, որը մինչև վերջ լսեց և յետոյ սսաց.

—Իրողութիւնն այն է որ ինչ որ արդէն պատահել է՝ կարող էր շատ սոսկալի կերպարնանը ստանալ. բայց փառք Ալլահին ոչինչ չեղաւ: Քիչ ժամանակ առաջ մի մարդ շատ մեծ շտապով և երկիրով մօտս եկաւ և սսաց որ մինչև ինքը քայլիս է լինում Պիկադիլի կոչուած փողոցում, տեսնում է մի մեծ ամբոխ որ կանգնած է լինում Green Park-ի մօտ գտնուող մի մեծ աւազանի մօտ: Նա աշխատում է իմանալ թէ ինչ է պատահել. նա մօտենում է և տեսնում է մի քանի պարսիկներ, որոնք շուտով իմացում է որ ձեր մարդկանցից են լինում: Աւելի մօտ գնալով, նա տեսնում է որ նրանցից մէկը տկլոր կանգնած է ջրում և մի ուրիշն էլ—մի սկ մարդ—հսկում է նրա շորերը: Ինչպէս երկում է, անգլիացի ամբոխը սաստիկ գայրանում է այդ պարսկի այդպէս անսամօթարար լողանալու վրայ և սկսում է ջարդել սկ մարդուն ու քար նետել լողացողի վրայ: Պարսիկներն էլ կատաղում են և սկ մարդը դաշոյնով յարձակում է իրան ձեծողների վրայ: հանգամանքը շատ վատանում է: Ամբոխը ձերբակալում է այդ երկու պարսիկին, զրկում է նրանց իրանց դաշոյններից և տանում է նրանց՝ աւելի խիստ պատիժ տալու: Իրողութիւնը հէնց այդ է. այժմ

դուք ուղարկեցէք ձեր ծառաների ետևից և տեսէք նրանք ինչ  
ունեն ասելու:

Մէմանդարի այս պատմութիւնը զրգուց դեսպանի կա-  
տաղութիւնը, նրա մօրուքի մազերը ցցուեցին և երեսի գոյնը  
բոլորովին փոխուեց:

—Այ դու ուրիշներին հաճոյք պատճառող Սէիդ, գոռաց  
նա, այ շան լակոտ, այդ դու ես որ այդպիսի խայտառակու-  
թիւն ես հանել. ես քո լեարդը կը հանեմ, հոգիդ բերնիցդ կը  
հանեմ:

Եւ ինձ տեսնելով՝ հրամայեց իսկոյն ծառաներին և յան-  
ցաւորներին էլ իր մօտ բերել Սէիդը (սեր)՝ որ մի ջահիլ վայ-  
ելչակազմ, աշխոյժ անձն էր՝ եկաւ ամենից առաջ. նա եկաւ  
առանց վախենալու, առանց ամաչելու, շորերը պատռուած,  
ու փոշաթաթախ: Նրա կողքին կանգնեց իր բարեկամ Թաղի  
Փէրաշը, որ մի լայն կրծքով, հաստ մօրուքով, մազոտ երի-  
տասարդ էր, և որը կարծես թէ մի սարսափելի փոթորկի  
մէջ էր հագել իր շորերը, որովհետև նրանց մի մասը չկար,  
և ինչ էլ որ կար՝ իր տեղումը չէր կանգնած: Այդ երկուսի  
ետևում կանգնեցին միւս ծառաները:

—Եյ շան լակոտներ, որոտաց դեսպանը, այդ ինչ էք  
արել, ինչ է պատահել: Միթէ ամեն օր ես պիտի տեսնեմ որ  
ձեր երեսներն աւելի և աւելի սևանում են այս օտար երկրում:  
Երդուում եմ այս մօրուքով (բռնելով իր մօրուքի ծայրը) որ  
եթէ հաստատուի որ դուք յանցանք էք գործել, բոլորիդ զլու-  
խները կը կտրեմ ամբողջ աշխարհի առաջ, որպէս զի մարդիկ  
տեսնեն որ մենք գիտենք թէ ինչ է նշանակում արդարու-  
թիւնը: Ասացէք, շան որդիներ, ինչպէս է պատահել:

—Ես ինչ գիտեմ՝ ասաց Սէիդը: Թաղին, Ֆէրէդունը և  
ես միասին գնում էինք փողոցում: Մենք հասանք մի աւազա-  
նի: Եղանակը շատ տաք էր, այնքան տաք՝ ինչքան Սպահան-  
ում: Թաղին ասաց. «այս օրից ինչ մենք Տաճկաստանից հեռա-  
ցել ենք՝ ես չեմ լողացել» և բանի որ ջուրը հրապուրիչ էր,  
նա առաջարկեց որ մենք տկլորանանք և ջուրը ընկնենք: Ես  
տեսայ որ նա վասակար բան չէր առաջարկում, և համաձայն-  
նեցի: Ճիշտ է, նա լոնգ<sup>1)</sup> չունէր, բայց մենք ասացինք, «այս  
անհաւատներին ինչ գիտեն թէ լոնգն ինչ է»: Ուստի նա տրկ-  
լորտեց և ընկաւ ջուրը: Դեռ մի ըովէ չանցած ամբոխը հա-  
ւաքուեց մեր շուրջը, և ոկսեց հայհոյել մեզ, ջնուգ անուանել  
մեզ, քար նետել մեզ վրայ: Մարդիկ ինձ բռնեցին և թաւալեցրին

1) Սփածանելի. ծ. թ.

գետնի վրայ: Ես կարծեցի որ նրանք կը սպանեն մեզ, որովհետև քաշ տալով մեզ տանում էին սպանդանոցը, բայց բարերախտաբար մի ֆրանկ վրայ հասաւ, միջաժմտեց և ազատեց: Իմ դանակն առան ձեռքիցս, Թաղիի մնտաքս գօտին էլ տարան, այդ է բոլոր իրողութիւնը աղա, էլ բան չկայ:

—Հէնց այդ է, Թաղի, ասաց դեսպանը, և այդ բոլորը քո մասին պիտ լսեմ, ես կարծում էի որ դու կատարեալ մարդես, վայ, վայ արդեօք էշերի ցեղը թրբ կը վերջանայ այս աշխարհում: Թաղի, դու մօրուքդ փոխել ես կովի մօրուքի հետ<sup>1)</sup>:

—Աղա, ասաց Թաղին, եթէ լողանալը յանցանք է, ուրեմն մենք յանցաւոր ենք. բայց ջուրը Ալլահի պարզմներից մէկն է և ամեն մարդու սեփականութիւն է: Մենք միայն մեր օրէնքները գիտենք, թող ֆրանկներն իրենցն էլ մեզ սովորեցնեն, այս ժամանակ նրանց համեմատ կը վարուենք:

—Տեսէք, ասաց դեսպանը հեգնելով. տեսէք, Փերաշը փիլսոփայ է դառել: Մաշալլամը, մաշալլահ, Լողմանը քեզանից աւելի լաւ չէր կարող խօսել: Ապա սափրիչն ուր է.

—Հէնց որ նա տեսաւ. որ քարերը գալիս են դէպի մեզ, նա իսկոյն փախաւ եւ դեռ տուն չէ եկել, պատասխանեց Սէիդը:

—Նա շատ լաւ արեց, ասաց դեսպանը, քանչի գործ է դա: Եւ դու ինչո՞ւ նրա օրինակին չհետևեցիր, դու ինչո՞ւ դանակ չքաշեցիր, ֆէղարսովլստէ (հայրդ այրուած):

—Դանակն անպէտք բան է, միայն թէ ժամանակին գործ ածուի պատասխանեց Սէիդը:

—Հիմա թնչ անենք, ասաց դեսպանը, դառնալով մէհամանդաբին: Յայտնի է որ այս մարդիկը դատողութիւն չունեն. սրանք կարծում են թէ անգլիական ջրերն էլ իրանց երկրի ջրերն են. վերջապէս սրանք շատ քիչ խելք ունեն, սրանք մեծ-մեծ էշեր են: Եթէ դուք կարծում էք թէ պատիժ է հարկաւոր սրանց՝ ասացէք: Եթէ դուք պահափշէք որ սրանց ականջներն անպատճառ պիտի կտրուեն՝ նրանք այս ըովէիս ձեր տրամադրութեան տակ կը դրուեն: Թերևս ձեր կառավարութիւնը ուրախ կը լինի սրանց գրլիներին տէր դառնալ, եթէ այդպէս է: Թող ասեն և գործը իսկոյն կը վերջանայ: Պարհն, մենք սիրում ենք արդարութիւնը. մենք կանք չենք առնում մեր գործի մէջ, մենք գնում են մինչեւ բոլորովին վերջացնում ենք:

1) Երբ մի պարսիկ իր մօրուքին անվայել մի բան է առում, նրան ասում են «մօրուքդ կովի մօրուք ես շինել»:

Մէհմանդարն երկար խօսեց, պարզելով իր հայեացըները արդարադատութեան մասին, և ինդրեց որ այդ խնդրի մասին այլ ևս ոչ մի խօսք չասուէր, միայն թէ մենք լաւ հասկանայինք և միշտ էլ յիշէինք որ Անգլիան Պարսկաստանը չէ:

Առթից օգտուելով ես ասացի.

—Պարսն, դուք պարծանքով էք խօսում ձեր երկրի ազատութեան մասին. բայց դուք ի՞նչպէս էք բացատրում պատահած դէպքը, երբ ձեզ ասում թէ երկու երիտասարդներ շոգից մեռնելով՝ օգտուում են Ալլահի տուած բարիթից. սակայն ձեր ժողովուրդը նրանց քարկոծում, սպանում է: Արկելքում մենք այդպէս չենք վարւում, պարոն:

Նա մի քիչ ջնցուեց, և մերոնք ուրախացան որ ես յաղթեցի նրան: Առանց սպասելու որ աւելին լսէր մեղանից՝ նա թողեց հեռացաւ, և յետոյ մենք—դեսպան ու ծառաներ՝ սկըսեցինք ազատ կերպով արտայայտել մեր զգացումներն և խօսեցինք այն բոլոր թերութիւնների մասին որ մենք տեսել էինք անհաւատների այս երկրում:

—Օ՛, ես մեռնում եմ, ես մեռայ, բացականչեց Միրզա Ֆիրուզը, յորանջելով և թևերը պարզելով: Ամեն օր մի նոր աղետ է պատահում ինձ. այ էլզիդիրութեան<sup>1)</sup> գերեզմանը: Սև լինչը այն օրը երբ ես դուրս ելայ իմ հայրենիթից, և եկայ այստեղ երեսս սեացնելու: Եւ դուք էլ (դառնալով բոլորիս) իմ կեանքը աւելի դառնացրից: Անհաւատները սիրում են ինձ... նրանք ասում են որ յանձին իմ՝ իսկական մարդ են տեսնում: Եթէ ինձ թողնչին որ այս երկրում մենակ մի անկիւնում նստէի, ոչինչ վնաս չէր լինի ինձ, բայց դուք չէք թողնում որ հանգիստ մնամ, հանգիստ ապրեմ: Էլ ճար չկայ, մենք պիտի վերադառնանք իրան. արդէն ժամանակն հասել է, վերջապէս իրանն ամենքիս հայրենիքն է, այնտեղ մենք օր արև ենք տեսնում, այնտեղ մենք ունենք մեր դաշտերը, այնտեղ մենք վայելում ենք մեր հարեմի ապահովութիւնը և ոչ ոքից փոյթ չունենք, ոչ ոքի շնորհին կարօտ չենք, այնտեղ մենք կարօտ ենք միայն Շահի շնորհին և գթութեանը:

Բալի, բալի, ով աղա, ասացինք բոլորս միաձայն. բալի, եկէք վերադառնանք, մենք պիտի վերադառնանք Պարսկաստան:

—Եթէ այս փէդարսուխտաները—Անգլիայի թագաւորի վէզրները բերածս նամակների պատասխանը կը տան և կը

1) Դեսպանական պաշտօն: